## *ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*
## *Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն*


| N | *Հաշվետվության բովանդակությունը* | *էջը* |
|---|---|---|
| 1. | ***Նախաբան*** | 2 |
| 2. | ***Ստուգումներ***<br>2.1. ***ՀՀ 14 մանկապարտեզներ***<br>2.2. ***ՀՀ 27 դպրոցներ***<br>2.3. ***ՀՀ 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ*** | 4<br>14<br>32 |
| 3. | ***Հետադարձ կապ***<br>ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հաստատություններից 2021 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ | 39 |
| 4. | ***Ստուգայցեր***<br>Ստուգայցեր Երևան քաղաքում գործող հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում | 41 |
| 5. | ***Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդրների ուսումնասիրություն կամ ստուգում (վարչական վարույթներ)*** | 41 |
| 6. | ***Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ*** | 46 |
| 7. | ***Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն*** | 47 |
| 8. | ***Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ վերահսկողություն***<br>8.1. Հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում Արցախից տեղափոխված սովորողների ընդգրկվածության և շարժի վերաբերյալ տեղեկատվություն<br>8.2. Հարցումներ արցախցի սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնական հաստատության մանկավարժական և վարչական կազմի հետ<br>8.3. Արցախցի սովորողների գրավոր աշխատանքների արդյունքների ուսումնասիրություն | 49<br>53<br>55 |

## *ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021 թվականի IV եռամսյակի գործունեությունը*

### *1. Նախաբան*

2021 թվականի IV եռամսյակում ՀՀ կրթության տեսչական մարմինն (ԿՏՄ) իրականացրել է ստուգումներ, ստուգայցեր, վարչական վարույթներ, խորհրդատվական, իրազեկման, աջակցման միջոցառումներ:

Համաձայն 2021 թվականի ստուգումների ժամանակացույցի՝ 2021 թվականի IV եռամսյակում ՀՀ 45 ուսումնական հաստատություններում (14 նախադպրոցական (մանկապարտեզ), 23 հանրակրթական (դպրոց), 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 7 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (ուսումնարան և քոլեջ)) նախատեսված բոլոր ստուգումներն իրականացվել են:

Նախադպրոցական կրթության ոլորտում 1 ստուգման միջին տևողությունը IV եռամսյակում կազմել է 3.1 աշխատանքային օր, միջնակարգ կրթության ոլորտում՝ 4.7, նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ 6.1 աշխատանքային օր:

**Նախադպրոցական կրթության ոլորտում** իրականացված 14 ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել բոլոր մանկապարտեզներում՝ կազմվել է 14 ակտ:

**Հանրակրթության ոլորտում** իրականացված 23 ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել ստուգված 21 դպրոցներում՝ կազմվել է 21 ակտ: Դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում՝ VI, IX և XI դասարանների սովորողների «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից 2019-2020, 2020-2021 ուսումնական տարիների մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով՝ տրվել են գրավոր աշխատանքներ: Սովորողների գրավոր աշխատանքների գնահատականների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բոլոր դասարաններում 2020-2021 ուսումնական տարվա արդյունքների համեմատ ավելի բարձր են 2019-2020 ուսումնական տարվա մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքները:

ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքներին մասնակցած 1431 սովորողներից «Գերազանց» են գնահատվել 47-ը (3.3%), «Լավ»՝ 145-ը (10.1%), «Բավարար»՝ 474-ը (33.1%), «Անբավարար»՝ 765-ը (53.5%): Միջին գնահատականը կազմել է 4.12 միավոր:

Միաժամանակ 23 դպրոցներից 8-ում իրականացված ստուգումների շրջանակում դպրոցների կրթական գործընթացը գնահատվել է համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմը (ձևաթուղթը) բաղկացած է հետևյալ հավելվածներից՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ»,

«Մաթեմատիկա», «Ուսումնական միջավայր», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)»: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ կրթության որակի բարձրացմանը միտված առաջարկներով՝ ուղարկվել են գնահատված դպրոցների տնօրեններին, որոշ դեպքերում նաև կառավարման խորհուրդների նախագահներին:

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում** իրականացված ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 7 ստուգված հաստատություններից 5-ում՝ կազմվել է 5 ակտ:

1 ուսումնարանում և 2 քոլեջներում իրականացված ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի: Ձևաթուղթը բաղկացած է «Տնօրեն», «Ուսանողի հարցաթերթ», «Գործընկեր կազմակերպություններ (Գործատու)» հավելվածներից: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին:

2021թ. IV եռամսյակում լիազոր մարմիններից ստացված գրությունների համաձայն ստուգումներ են իրականացվել 1 քոլեջում և 13 դպրոցներում: Ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են արձանագրվել 1 քոլեջում և 12 դպրոցներում: Կազմվել է 13 ակտ:

ԿՏՄ-ում ստացվել են **13** դիմում-բողոքներ **12** ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Առավել հաճախ կրկնվող հարցերը վերաբերել են տնօրենի (ռեկտորի) կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին:

Հանրակրթության, նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունների աշխատակիցների կողմից իրականացվել են կանխարգելիչ, աջակցման, խորհրդատվական հեռավար **11** միջոցառումներ՝ ՀՀ **36** նախադպրոցական, **24** հանրակրթական, **19** նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, **1** իրազեկում-հանդիպում՝ **10** նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների անդամների մասնակցությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ **152** և **189** ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի **87** դպրոցներ և **100** մանկապարտեզներ:

ԿՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների՝ Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ իրականացվել է վերահսկողություն՝ կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը, հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով:

Իրականացվել են այդ սովորողների կրթական կարիքների վերաբերյալ հարցումներ, ուսումնասիրվել են նրանց շարժը, բովանդակային ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքները:

## *2. Ստուգումներ*

### *2.1. ՀՀ 14 մանկապարտեզներ*

***Հիմքը՝***

ԿՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

***Նպատակը՝***

Մանկապարտեզներում անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայր ապահովելու նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելը (ըստ անհրաժեշտության՝ նաև հեռավար), ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելը, գնահատելը, տվյալների բազա ձևավորելը:

***Ժամկետը՝***

2021 թվականի IV եռամսյակ:

***Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝***

***Երևանի հ.հ. 14, 39, 40, 42, 44, 128, ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի «Լիլիթ» մանկապարտեզների*** համար ստուգմամբ ընդգրկող ժամանակահատված է ընդունվել՝ 20.08.2018թ. – 03.11.2021թ.,

***ՀՀ Արարատի մարզի Վ. Արտաշատի «Լուսնթագ», Ռանչպարի, ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուրի մանկապարտեզների*** համար՝ 20.08.2018թ.- 05.10.2021թ.,

***ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 11 մանկապարտեզի*** համար՝ 20.08..2018թ.–18. 10..2021թ.,

***ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 15 «Չվարթնոց», Նորակերտի մանկապարտեզների*** համար՝ 20.08.2018թ.–26.10.2021թ.,

***ՀՀ Տավուշի մարզի Արճիսի մանկապարտեզի*** համար՝ 20.08.2018թ. – 07.10.2021թ.:

***Ստուգման արդյունքները՝***

2021 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել ՀՀ 14 մանկապարտեզներում:

Մանկապարտեզների կրթական գործունեության ստուգման արդյունքում արձանագրված խախտումներն ըստ բնույթների ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում.

**Աղյուսակ 1**

| Խախտման բնույթը | Մանկապար տեղների թիվ (%) | Մանկապարտեզի անվանումը |
|---|---|---|
| 1. Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով չեն հատկացվել պաշտոնային դրույքաչափերը | 7 (50%) | Երևանի հ. 14, Ձորաղբյուրի, Արճիսի, Ռանչպարի, Կապանի թիվ 11, Գյումրիի «Լիլիթ», Նորակերտի մանկապարտեզներ |
| 1.1 Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 7 (50%) | Երևանի հ. 14, Ձորաղբյուրի, Արճիսի, Ռանչպարի, Կապանի թիվ 11, Գյումրիի «Լիլիթ», Նորակերտի մանկապարտեզներ |
| 1.2 Մեթոդիստ | 6 (42,8%) | Երևանի հ. 14, Արճիսի, Ձորաղբյուրի, Ռանչպարի, Կապանի թիվ 11, Նորակերտի մանկապարտեզներ |
| 1.3 Երաժշտության դաստիարակ | 1 (7%) | Ռանչպարի մանկապարտեզ |
| 2. Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով պակաս են հատկացվել պաշտոնային դրույքաչափերը | 6 (42,8%) | Երևանի հ. 39, 40, 44, Ձորաղբյուրի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի մանկապարտեզներ |
| 2.2 Մեթոդիստ | 2 (14%) | Երևանի հ.128, Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզներ |
| 2.3 Դաստիարակ | 2 (14%) | Ձորաղբյուրի, Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզներ |
| 2.4 Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 6 (42,8%) | Երևանի հ. 39 , 40, 44, 128, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի մանկապարտեզներ |
| 2.4 Երաժշտության դաստիարակ | 4 (28,5%) | Երևանի հ. 39, 44, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի մանկապարտեզներ |
| 3.Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի խախտումով | 7 (50%) | Երևանի հ.. 39 (պարուսույց),<br>Երևանի հ. 42 (դաստիարակ, լրացուցիչ կրթության մանկավարժ),<br>հ. 128 (մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝2, դաստիարակ՝2,)<br>Արճիսի (դաստիարակ՝3),<br>Ռանչպարի (դաստիարակ՝1),<br>Գյումրիի «Լիլիթ» (մեթոդիստ՝ 2),<br>Նորակերտի (դաստիարակ՝2) մանկապարտեզներ |
| 4. Մանկապարտեզի խմբերի երեխաների խտությունը գերազանցում է սահմանված նորմատիվը | 5 (35,7%) | Երևանի հ. հ. 39, 44, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Ծվարթնոց» մանկապարտեզներ |

| | | |
|---|---|---|
| 5. Խմբերի ձևավորումը չի իրականացվել երեխաների տարիքային հենքի հիման վրա | 5 (35,7%) | Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |
| 6.Սաների հրամանագրման ժամկետների խախտում | 5 (35,7%) | Երևանի հ. 44, Արճիսի, Կապանի թիվ 11, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ» մանկապարտեզներ |
| Մանկապարտեզի տարատարիք խմբի պարապմունքների բաշխման դրաֆիկը սահմանված կարգով չի կազմվել | 2 (14%) | Երևանի հ.128, Կապանի թիվ 11 մանկապարտեզներ |
| 6. Մանկապարտեզի տարատարիք խմբում տարբերակված ուսուցում չի իրականացվել | 5 (35,7%) | Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |
| 7. ՀՀ ԿԳ նախարարի՝ համապատասխան հրամաններով տրված նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սովորողների համակազմի սահմանային թվերի խախտում | 1 (7%) | Կապանի թիվ 11 մանկապարտեզ |
| 8. Մանկավարժական աշխատողներին ներկայացվող պաշտոնային պարտականությունների չկատարում | 10 (71,4%) | Արճիսի (մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Ձորաղբյուրի (մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Ռանչպարի (երաժշտության դաստիարակ, մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Վ. Արտաշատի «Լուսնթագ» (ֆիզհրահանգիչ),<br>Կապանի թիվ 11 (երաժշտության դաստիարակ, մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Գյումրիի «Լիլիթ» (ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Նորակերտի (մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Երևանի հ. 14 (մեթոդիստ, ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>Երևանի հ. 44 (ֆիզկուլտուրայի հրահանգիչ),<br>«Զվարթնոց» (ֆիզկուլտուրայի հրահանգիչ) մանկապարտեզներ |
| Մանկապարտեզի տեսակը չի համապատասխանում օրենքով սահմանված տեսակին | 1 (7,3%) | Կապանի թիվ 11 մանկապարտեզ |
| 9. Չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա | 4 (28,5%) | Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Ռանչպարի (ապահովվել է ստուգման ընթացքում) մանկապարտեզներ |

| | | |
|---|---|---|
| 10.Կանոնադրության անհամապատասխանություն | 14 (100%) | Բոլոր ստուգված մանկապարտեզներում |
| 11. Զարգացնող միջավայր | 2 (14%) | Երևանի h. 14, Ձորաղբյուրի մանկապարտեզներ |
| 11.1 Առկա չէ մարզադահլիճ | 2 (14,2%) | Երևանի h. 14, Ձորաղբյուրի մանկապարտեզներ |
| 11.2 Առկա չէ երաժշտական դահլիճ | 1 (7%) | Ձորաղբյուրի մանկապարտեզ |
| 11.3 Առկա չեն խաղային միջոցներ | 1 (7%) | Երևանի h. 14 մանկապարտեզ |

**Խախտվել են հետևյալ իրավական ակտերի պահանջները (Աղյուսակ 2).**

Աղյուսակ 2

| Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ | Մանկապարտեզի անվանումը |
|---|---|
| «Կրթության մասին» ՀՀ օրենք | |
| **41-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ.**«*Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում*»: | Արճիսի, Ռանչպարի, Նորակերտի, Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզներ |
| «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք | |
| **6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատություն (կամ ծառայություններ) ընդգրկվում են այն երեխաները, որոնց նախադպրոցական տարիքը լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ)*»: | Արճիսի մանկապարտեզ |
| **6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների տարիքային հենքի հիման վրա ձևավորվում են հետևյալ տարիքային խմբերը. 5) միջին խումբ՝ 4-ից մինչև 5 տարեկան հասակը, 6) ավագ խումբ՝ 5-ից մինչև 6 տարեկան հասակը)*»: | Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |
| **6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների տարիքային հենքի հիման վրա ձևավորվում են հետևյալ տարիքային խմբերը. կրտսեր երկրորդ խումբ՝ 3-ից մինչև 4 տարեկան հասակը.*»: | Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ» մանկապարտեզներ |
| **6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջ.**«*Ավագ խմբում 6 տարեկան երեխայի ուսուցումն ու զարգացումը կազմակերպվում են մինչև տվյալ տարվա օգոստոսի 20-ը՝ անկախ երեխայի 6 տարեկանը լրանալուց*»: | Արճիսի մանկապարտեզ |
| **7-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջ.** «*Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումը այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը*»: | Վ. Արտաշատի «Լուսնթագ», Արճիսի, Գյումրիի «Լիլիթ», Երևանի h. 44 մանկապարտեզներ |
| **10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը*»: | Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Երևանի h.h. 39, 44, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |

| | |
|---|---|
| **10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջ.**«*Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից*»: | **Կապանի թիվ 11, Երևանի հ. 128 մանկապարտեզներ** |
| **11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջ.**«*Նախադպրոցական կրթական ծրագրի, այդ թվում՝ դրա ցանկացած տեսակի և նախադպրոցական ծառայությունների իրականացումը, լիցենզավորման ենթակա գործունեություն է*»: | **Արճիսի, Ռանչպարի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի մանկապարտեզներ** |
| **19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար)*»: | **Գյումրիի «Լիլիթ», Կապանի թիվ 11,**<br><br>**Երևանի հ. 128 մանկապարտեզներ** |
| **20-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատության տեսակներից յուրաքանչյուրն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի՝ տվյալ տարիքային խմբի համար հաստատած չափանիշների (պայմանների) և կրթական ծրագրի հիման վրա*»: | **Կապանի թիվ 11, Երևանի հ. 128 մանկապարտեզներ** |
| **20-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի պահանջներ.**«*Նախադպրոցական կրթական ծրագիր (ծրագրեր) և (կամ) նախադպրոցական ծառայություն կարող է (են) կազմակերպվել .՝ համապատասխան լիցենզիայի առկայության հիմքով*»: | **Արճիսի, Ռանչպարի, Նորակերտի, Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզներ** |
| **20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ ենթակետերի պահանջներ.** *«Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝ 1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ, 2) մսուր - մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ, 3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ, 4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ, 5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ»:* | **Կապանի թիվ 11 մանկապարտեզ** |
| **21-րդ հոդվածի 4-րդ մաս**ի պահանջ. «*Նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը Կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է*»: | **Բոլոր 14 մանկապարտեզներում** |
| **2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին» № 54 արձանագրային որոշմամբ հաստատված օրինակելի կանոնադրություն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն** | |
| **7-րդ կետի պահանջ.**«*Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները...*»: | **Ռանչպարի, Արճիսի, Ջրաղբյուրի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի Կապանի թիվ 11, Գյումրիի «Լիլիթ», Երևանի հ.հ. 39, 40, 42,** |

| | |
|---|---|
| | 44, 128, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |
| **50-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջ.**«*Տնօրենը՝.համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ .անցկացնում է մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը*... »: | Արճիսի, Ռանչպարի, Նորակերտի, Գյումրիի «Լիլիթ», Երևանի հ.հ. 39, 42, 128 մանկապարտեզներ |
| **51-րդ կետի պահանջ.**«*Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը*...»: | Արճիսի մանկապարտեզ |
| **52-րդ կետի 2-րդ, 4-րդ ենթակետերի պահանջներ.**«*Մեթոդիստը՝ (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝... ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը, կազմակերպում է հասփապության մեթոդկաբինետի աշխատանքը* ... »: | Ձորաղբյուրի, Ռանչպարի, Նորակերտի, Արճիսի, Կապանի թիվ 11 մանկապարտեզներ |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրեր»** | |
| **II գլխի 1-ին կետի 6-րդ ենթակետի պսհսնջ.**«*Տնօրենը իրականացնում է մանկավարժական կադրերի ընտրությունը, ընդունելությունը և տեղաբաշխումը*)»: | Արճիսի, Ռանչպարի, Նորակերտի, Գյումրիի «Լիլիթ», Երևանի հ.հ. 39, 42, 128 մանկապարտեզներ |
| **II գլխի 8-րդ կետի պահանջ.**«*Տնօրենը ձևավորում է երեխաների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը*»: | Գյումրիի «Լիլիթ», Կապանի թիվ 11, Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ |
| III **գլխի 1-ին կետի 8-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ ենթակետերի, 12-րդ *ենթակետի «գ», «հ»*** *պարբերություններ,* ***22-րդ ենթակետի «ա», «գ»*** *պարբերությունների մեթոդիստի պաշտոնային պարտականություններ*)» **պահանջներ:** | Ձորաղբյուրի, Կապանի թիվ 11, Արճիսի, Նորակերտի, Ռանչպարի, Երևանի հ. 14 մանկապարտեզներ |
| III **գլխի 1-ին կետի 8-րդ, 12-րդ,15-րդ ենթակետերի**՝ *«գ», «հ» պարբերություններ,* ***22-րդ ենթակետի «ա», «գ»*** *պարբերությունների մեթոդիստի պաշտոնային պարտականություններ*) » **պահանջներ:** | Ձորաղբյուրի, Կապանի թիվ 11, Արճիսի, Նորակերտի, Ռանչպարի, Երևանի հ. 14 մանկապարտեզներ |
| III **գլխի 1-ին կետի 8-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ ենթակետերի, 12-րդ *ենթակետի «գ», «հ»*** *պարբերություններ,* ***22-րդ ենթակետի «ա», «գ»*** *պարբերությունների մեթոդիստի պաշտոնային պարտականություններ*)» **պահանջներ** | Ձորաղբյուրի, Կապանի թիվ 11, Արճիսի, Երևանի հ. 14, Ռանչպարի, Նորակերտի, մանկապարտեզներ |

| | |
|---|---|
| **III գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.**«Նախադպրոցական ուսումնական հաստատության **_մեթոդիստի,_** տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) կրթություն և վերջին յոթ տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի կամ մանկավարժական աշխատանքի առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»: | **Գյումրիի «Լիլիթ», Երևանի հ. 128 մանկապարտեզներ** |
| **IV գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.**«Նախադպրոցական ուսումնական հաստատության **_դաստիարակը_** պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»: | **Արճիսի, Ռանչպարի, Նորակերտի, Երևանի հ.հ. 42, 128 մանկապարտեզներ** |
| **VII գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.** «Նախադպրոցական ուսումնական հաստատության <u>**ֆիզկուլտուրայի հրահանգչի**</u> պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ»: | **Երևանի հ. 128 մանկապարտեզ** |
| **VIII գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.**« *(Նախադպրոցական ուսումնական հաստատության <u>լրացուցիչ կրթության մանկավարժը</u> պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ*»: | **Երևանի հ. 42 մանկապարտեզ** |
| **VII գլխի 1-ին կետի 1-15-րդ ենթակետերի՝** (*ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնային պարտականություններ*) **պահանջներ:** | **Արճիսի, Ձորաղբյուրի, Ռանչպարի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Գյումրիի «Լիլիթ», Կապանի թիվ 11, Նորակերտի, Երևանի հ. 14, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ** |
| **VII գլխի 1-ին կետի՝ 1-ին, 2-րդ, 6-8-րդ, 10-11-րդ, 13-րդ, 15-րդ ենթակետերի ՝** (*ֆիզկուլտուրայի հրահանգչի , մեթոդիստի պաշտոնային պարտականություններ* **պահանջներ:** | **Ձորաղբյուրի, Արճիսի, Գյումրիի «Լիլիթ», Կապանի թիվ 11, Նորակերտի, Ռանչպարի, Երևանի հ. 14, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզներ** |
| **VII գլխի 1-ին կետի 1-2-րդ ենթակետերի պահանջներ.** «*Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչը նախադպրոցական կրթական ծրագրերին համապատասխան՝ երեխաների հետ տանում է ֆիզիկական դաստիարակության աշխատանքներ, որոշում է պարապմունքների խնդիրները և բովանդակությունը՝ հաշվի առնելով երեխաների տարիքը, պատրաստվածությունը, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները*»: | **Ձորաղբյուրի, Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Կապանի թիվ 11, Նորակերտի, Ռանչպարի, Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց», Երևանի հ. 14 մանկապարտեզներ** |

| | |
|---|---|
| **VII գլխի 1-ին կետի 8-րդ և 13-րդ ենթակետերի պահանջներ.** «*Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչը... վարում է մատյանը, որտեղ ամրագրվում է պարապմունքների բովանդակությունը, երեխաների հաճախումները,... տարվա ընթացքում երկու անգամ ձևավորում է յուրաքանչյուր երեխայի ֆիզիկական զարգացման գնահատականը (կիրառելով ընտրանքային կարգով գնահատման (դիագնոստիկայի) մեթոդիկան)*»: | **Ձորաղբյուրի, Արճիսի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Կապանի թիվ 11, Նորակերտի, Ռանչպարի, Երևանի հ. 14, 44, Էջմիածնի թիվ 15 «Ծվարթնոց» մանկապարտեզներ** |
| **VII գլխի 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության դաստիարակը (երաժշտական ղեկավարը) հաշվետու է հաստատության ղեկավարին և մանկավարժական խորհրդին*»: | **Արճիսի մանկապարտեզ** |
| **VII գլխի 1-ին կետի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ ենթակետերի պահանջներ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը կազմակերպում է ծնողների հետ բացատրական աշխատանք՝ պարապմունքներին երեխաների նախապատրաստման ուղղությամբ*»: | **Արճիսի, Կապանի թիվ 11, Նորակերտի, Ռանչպարի, Երևանի հ. 14 մանկապարտեզներ** |
| **VIII գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջ.**«*Նախադպրոցական ուսումնական հաստատության պարուսույցը (պարի խմբավարը) պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ*» : | **Երևանի հ. 39 մանկապարտեզ** |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն հրամանով (փոփ.՝ 16.11.2017թ., № 1318-Ն հրաման) հաստատված «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները»** | |
| **Հավելված 1-ի պահանջներ.**<br>**ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակ** | **Ձորաղբյուրի, Արճիսի, Ռանչպարի, Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Կապանի թիվ 11, Երևանի հ. 14, Գյումրիի «Լիլիթ», Էջմիածնի թիվ 15 «Ծվարթնոց», Երևանի հ. հ. 39, 40, 44 մանկապարտեզներ** |
| **Հավելված 2-ի պահանջներ.**<br>**խմբերի խտություն, նորմատիվներ** | **Վ. Արտաշատի «Լուսնթագ», Նորակերտի, Էջմիածնի թիվ 15 «Ծվարթնոց», Երևանի հ.հ. 39, 44 մանկապարտեզներ** |
| **ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 744-Ն որոշմամբ հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ** | |
| **2-րդ գլխի 10-րդ կետի 5-րդ, 6-րդ, 11-րդ կետի 5-րդ, 12-րդ կետի 5-րդ, 6-րդ, 13-րդ կետի 5-րդ, 6-րդ, 14-րդ կետի 5-րդ, 6-րդ ենթակետերի պահանջներ.** «*Նախադպրոցական ուսումնական հաստատության տեսակներից յուրաքանչյուրն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի՝ տվյալ տարիքային խմբի համար հաստատած չափանիշների (պայմանների) և կրթական ծրագրի հիման վրա) (Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից*)»: | **Կապանի թիվ 11, Երևանի հ. 128 մանկապարտեզներ** |

| N | Ուսումնական հաստատության անվանում | Ստուգա թերթ N1 | Ստուգա թերթ N2 | Ստուգա թերթ N3 | Ստուգա թերթ N4 | Ընդհանուր ռիսկ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ձորաղբյուրի մանկապարտեզ | 0 | 21 | 2 | 3.5 | 26.5 |
| 2. | Արճիսի մանկապարտեզ | 7.5 | 22 | 0 | 6.5 | 36 |
| 3. | Կապանի թիվ 11 մանկապարտեզ | 2 | 21 | 0 | 5 | 28 |
| 4. | Ռանչպարի մանկապարտեզ | 3 | 25 | 0 | 3.5 | 31.5 |
| 5. | Վ. Արտաշատի «Լուսնթագ» մանկապարտեզ | 2 | 1 | 0 | 8.5 | 11.5 |
| 6. | Նոյակերտի մանկապարտեզ | 7 | 22 | 0 | 8 | 37 |
| 7. | Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզ | 2.5 | 8 | 0 | 3.5 | 14 |
| 8. | Գյումրու «Լիլիթ» մանկապարտեզ | 5.5 | 11.5 | 0 | 5.5 | 22.5 |
| 9. | Երևանի թիվ 14 մանկապարտեզ | 0 | 21 | 2 | 2.5 | 25.5 |
| 10. | Երևանի թիվ 39 մանկապարտեզ | 5 | 0 | 0 | 4 | 9 |
| 11. | Երևանի թիվ 40 մանկապարտեզ | 0 | 8 | 0 | 2.5 | 10.5 |
| 12. | Երևանի թիվ 42 մանկապարտեզ | 5 | 0 | 0 | 2 | 7 |
| 13. | Երևանի թիվ 44 մանկապարտեզ | 2 | 1 | 0 | 4.5 | 7.5 |
| 14. | Երևանի թիվ 128 մանկապարտեզ | 11 | 0 | 0 | 4 | 15 |
| Ընդամենը | | 52.5 | 161.5 | 4 | 63.5 | 281.5 |
| Միջինացված ռիսկային միավոր | | 3.8 | 11.5 | 0.3 | 4.5 | 20.1 |

| | |
|---|---|
| **3-րդ գլխի 36-րդ կետի 20-րդ ենթակետի.** *«Նախադպրոցական ուսումնական հաստատությունում 3-ից մինչև 6 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող* ***պահանջներ…*** **, 32-րդ ենթակետի** *(… առկա է մարզադահլիճ»* **պահանջներ:** | **Ձորաղբյուրի, Երևանի հ. 14 մանկապարտեզներ** |
| **3-րդ գլխի 36-րդ կետի 5-րդ, 21-րդ, 26-րդ, 36-րդ, 37-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ ենթակետերի պահանջներ:** | **Երևանի հ. 14 մանկապարտեզ** |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված՝ նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սահմանված սովորողների համակազմի սահմանային թվեր** | **Կապանի թիվ 11 մանկապարտեզ** |

Մանկապարտեզներում ըստ բոլոր 4 ստուգաթերթերի իրականացված ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը (Աղյուսակ 3).

**Աղյուսակ 3**

Ինչպես ներկայացված է աղյուսակ 3-ում՝ **զարգացնող միջավայրին ներկայացվող** պահանջների ***(N3)*** կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում կրթության բնագավառը

կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են 14 մանկապարտեզներից 2-ում (14%):

Նախադպրոցական ուսումնական հաստատության **տնօրենին ներկայացվող պահանջների** ***(N1)*** կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 14 մանկապարտեզներից 11-ում (79%):

**Մեթոդիստին՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալին, մանկավարժական աշխատողներին** ***(N2)*** ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ չեն արձանագրվել ***Երևանի թիվ 39, Երևանի թիվ 42, Երևանի թիվ 128*** մանկապարտեզներում:

Կրթության կազմակերպման պահանջների ***(N4)*** խախտումներ են արձանագրվել բոլոր մանկապարտեզներում:

Ստուգված 14 մանկապարտեզների միջին ռիսկային միավորն ըստ ստուգաթերթերի 20.1 է, իսկ միջին ռիսկային միավորն ըստ N2 ստուգաթերթի՝ 11.5 (57%): Ինչը նշանակում է, որ մանկապարտեզներում առավել ռիսկային է մեթոդիստին, մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների կատարումը: Ըստ ռիսկայնության երկրորդ տեղում կրթության կազմակերմանը վերաբերող պահանջների կատարման խախտումներն են, ապա՝ տնօրենին ներկայացվող պահանջների կատարման խախտումները:

Ստուգումների արդյունքում արձանագրված 117 խախտումներից 41-ի հետևանքները հնարավոր չէ վերացնել՝ ժամկետնանց լինելու պատճառով: 13 մանկապարտեզների կանոնադրությունների անհամապատասխանություններին վերաբերող խախտումների մասով առաջարկներ են ներկայացվել համապատասխան համայնքների ղեկավարներին, իսկ մնացած 63 խախտումների վերաբերյալ մանկապարտեզների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

***Ձեռնարկված միջոցառումները՝***

Ըստ ստուգումների արդյունքների՝ բոլոր 14 մանկապարտեզներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 14 ակտ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ մանկապարտեզների տնօրեններին, ՀՀ Տավուշի մարզի Արճիս, ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր, ՀՀ Սյունիքի մարզի Կապան, ՀՀ Արարատի մարզի Ռանչպար, Վ. Արտաշատ, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին, Նոյակերտ համայնքների ղեկավարներին և Երևանի քաղաքապետին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: Երևանի քաղաքապետին և համայնքների ղեկավարներին առաջարկվել է քննարկել ստուգումների արդյունքները, ձեռնարկել համապատասխան միջոցներ և արդյունքների մասին տեղեկացնել ԿՏՄ-ին:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ուղարկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարներն՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու առաջարկությամբ:

Երևանի քաղաքապետից, ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ, Ռանչպար, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին, ՀՀ Կոտայքի մարզի Զորաղբյուր, ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքների ղեկավարներից ստացվել են գրություններ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

### *2.2. ՀՀ 27 դպրոցներ*

***Հիմքը՝***

ԿՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

***Նպատակը՝***

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության և դիմակայունության ապահովումը, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելը, գնահատել, տվյալների բազա ձևավորելը:

***Ժամկետը՝***

2021 թվականի IV եռամսյակ:

***Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝***

- ***Երևանի հ. 107 միջնակարգ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ (դպրոց), Գյումրու հ. 5, Կապանի հ. 13 և Լեռնաձորի հիմնական, Ակնալճի, Սարդարապատի, Վանանդի, Ջրառատի, Կապանի հ. 10, Մեղրիի հ. 1 միջնակարգ, Ստեփանավանի ավագ դպրոցներում՝*** 2018 թվականի օգոստոսի 20-ից մինչև ստուգումը սկսելու օրը,
- ***Կարինի, Վարդենիսի և Արագածոտնի միջնակարգ դպրոցներում՝*** 2018 թվականի օգոստոսի 20-ից (մանկավարժական կադրերի և ուսումնական պլանների համար ստուգման ժամանակահատվածի սկիզբ է ընդունվել **2019 թվականի մայիսի 20-ը)** մինչև ստուգումը սկսելու օրը,
- ***Վանաձորի հ. 6 հիմնական, Ալավերդու հ. 9, Ախթալայի հ. 1, Շամլուղի, Վարդաբլուրի, Արջուտի, Մեծավանի հ. 2 միջնակարգ, Ստեփանավանի ավագ դպրոցներում՝*** **2018 թվականի օգոստոսի 20-ից** (մանկավարժական կադրերի և ուսումնական պլանների համար ստուգման ժամանակահատվածի սկիզբ է ընդունվել **2019 թվականի օգոստոսի 14-ը)** մինչև ստուգումը սկսելու օրը,
- ***Արենիի, Խնձորուտի և Մալիշկայի հ. 1 միջնակարգ դպրոցներում՝*****2018 թվականի նոյեմբերի 5-ից** մինչև ստուգումը սկսելու օրը.

- ***Երևանի հ. 55 հիմնական դպրոցում՝*** **2018 թվականի նոյեմբերի 26-ից** մինչև ստուգումը սկսելու օրը.

- ***Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոցում՝*** **2018 թվականի նոյեմբերի 30-ից** մինչև ստուգումը սկսելու օրը:

***Ստուգման արդյունքները՝***

2021 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել ՀՀ 23 դպրոցներում: 2021 թվականի III եռամսյակում ստուգված 4 դպրոցների արդյունքները ևս ամփոփվել են IV եռամսյակում, հետևաբար ստորև ներկայացվելու են 27 դպրոցներում (***Երևանի՝ 4, ՀՀ Շիրակի մարզի՝ 1, ՀՀ Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի՝ 3-ական, ՀՀ Արմավիրի և Սյունիքի մարզերի՝ 4-ական, ՀՀ Լոռու մարզի՝ 8 դպրոցներ***) իրականացված ստուգումների արդյունքները:

Ստուգված դպրոցներում կիրառված ստոգաթերթերի փաթեթներն՝ ըստ սահմանված թիրախների, ներկայացված են աղյուսակ 4-ում.

**Աղյուսակ 4**

| N | Ստուգաթերթեր ի փաթեթներ | Թիրախ | Դպրոցի անվանումը |
|---|---|---|---|
| *1.* | *NN 01, 03, 04, 06, 07, 14* | *Հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական և աշակերտական խորհուրդների) վարչական աշխատողների գործունեության իրավաչափությունը* | *Արենիի, Խնձորուտի, Մալիշկայի հ. 1 միջնակարգ դպրոցներ* |
| *2.* | *NN 01, 02, 03, 04, 05, 08, 09* | *Դպրոցավարություն և կադրային քաղաքականություն* | *Կարինի, Մեղրիի հ. 1, Վարդենիսի, Կապանի հ. 10, Երևանի հ. 107, Արագածոտնի միջնակարգ, Լեռնաձորի, Կապանի հ. 13 հիմնական դպրոցներ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ (դպրոց), Երևանի երաժշտական հ.13 հատուկ/դ* |
| *3.* | *NN 01, 02, 03, 04, 14, 15* | *Կրթական գործընթացի կազմակերպում* | *Ակնալճի, Արջուտի, Շամլուղի, Վարդաբլուրի, Ախթալայի հ. 1, Ալավերդու հ. 9, Մեծավանի հ. 2 միջնակարգ, Երևանի հ. 55, Վանաձորի հ. 6 հիմնական, Ստեփանավանի ավագ դպրոցներ* |

| | | | |
|---|---|---|---|
| *4.* | *NN 01, 03, 10, 11, 12, 13* | *Սովորողների շարժ՝ ընդունելության, տեղափոխման, դասարանից դասարան փոխադրման (ներառյալ՝ էքստեռն կարգով), ավարտման գործընթացների նկատմամբ վերահսկողություն* | *Վանանդի, Ջրառատի, Սարդարապատի միջնակարգ, Գյումրու հ. 5 հիմնական դպրոցներ* |

Ստորև ներկայացվել են խախտումների բնույթները՝ ըստ ստուգաթերթերի.

**N 01 Կրթության կազմակերպում** Կիրառվել է բոլոր 27 դպրոցներում:

- Հանրակրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիայի բացակայություն (***Ջրառատի մ/դ),***

- լիցենզիայով սահմանված սովորողների համակազմի սահմանային տեղերի թվերի գերազանցում՝ **4 դպրոցներում (15%)՝** ***Արենիի, Ակնալճի, Մալիշկայի հ. 1 միջնակարգ, Երևանի հ. 55 հիմնական դպրոցներ,***

- **ս**ովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում՝ ***Երևանի հ. 55 հիմնական դպրոց*** *(120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողներ),*

- **ուսումնական պլանի պահանջներ՝ 9** դպրոցներում **(33%)՝** ***Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոց, Երևանի պարարվեստի պետական քոլեջ (դպրոց), Երևանի հ. 55, Վանաձորի հ. 6 և Լեռնաձորի հիմնական, Խնձորուտի, Մալիշկայի հ. 1, Արենիի, Ջրառատի միջնակարգ դպրոցներ:***

**N 02 Ուսուցչի պարտականություններ** Կիրառվել է 20 դպրոցներում:

Ուսուցչի կողմից կրթական ծրագրի չկատարում (ուսումնական պլանի պահանջներ)՝ ***Երևանի հ. 55 հ/դ*** *(առարկայական ծրագրի ժամաքանակի անհամապատասխանություն):*

**N 03 Տնօրենին ներկայացվող պահանջներ** Կիրառվել է բոլոր 27 դպրոցներում:

Տնօրենին ներկայացվող պահանջների խախտումներ արձանագրվել են **24-ում (89%),** բացառությամբ՝ ***Երևանի հ. 107, Արագածոտնի միջնակարգ դպրոցների և Երևանի պարարվեստի պետական քոլեջի (դպրոց):***

- **Ներքին** գնահատման իրականացում և (կամ), կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայացում և (կամ), հրապարակման ապահովում՝ 9 դպրոցներում՝ 33% (***Վանանդի, Վարդենիսի, Խնձորուտի, Արենիի, Վարդաբլուրի, Մալիշկայի հ. 1, Ջրառատի, Շամլուղի միջնակարգ, Վանաձորի հ. 6 հիմնական դպրոցներ***),

- **գործունեության հաշվետվողականություն, հաշվետվությունների, պլանների հաստատում՝ 8** դպրոցներում՝ **30% (*Վարդենիսի, Վարդաբլուրի, Խնձորուտի, Ջրառատի, Մալիշկայի հ. 1, Վանանդի միջնակարգ, Գյումրու հ. 5 հիմնական, Ստեփանավանի ավագ դպրոցներ*),**

- **վարչական աշխատողի ուսումնական ծանրաբեռնվածության գերազանցում՝** 5 դպրոցներում՝ **19% (*Ախթալայի հ. 1, Կարինի, Արջուտի, Մալիշկայի հ. 1, Շամլուղի միջնակարգ դպրոցներ*),**

- **կրթության հաջորդականություն՝ 6**(**22%)** դպրոցներում **9** սովորող (***Ակնալճի, Կարինի, Սարդարապատի, Ջրառատի միջնակարգ, Վանաձորի հ. 6 հիմնական, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոցներ*** ),

- **սովորողների համակազմի ձևավորում՝ 9(33%)** դպրոցներում (***Արենիի, Ակնալճի, Կարինի, Մալիշկայի հ. 1, Սարդարապատի, Ջրառատի միջնակարգ, Երևանի հ. 55, Վանաձորի հ. 6 հիմնական, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոցներ***),

- **մանկավարժական աշխատողի նշանակում՝ 27** դպրոցներից **21-ում (78%),** բացառությամբ՝ Երևանի հ. 107, Արագածոտնի, Մալիշկայի հ. 1, Վարդաբլուրի միջնակարգ, Վանաձորի ավագ դպրոցներում և Երևանի պարարվեստի պետական քոլեջի (դպրոց): Արձանագրվել են **88** մանկավարժական աշխատողների նշանակման **109** խախտումներ:

**N 04 Տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականություններ** Կիրառվել է բոլոր 23 դպրոցներում: Խախտումներ արձանագրվել են **6-ում՝ 26%** (***Արենիի, Մալիշկայի հ. 1, Շամլուղի, Վարդենիսի, Մեծավանի հ. 2 միջնակարգ, Երևանի հ. 55 հիմնական դպրոցներ***):

**N 05 Մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիր** Կիրառվել է **10** դպրոցներում: Խախտում հայտնաբերվել է միայն **1 (10%)՝** Լեռնաձորի հիմնական դպրոցում.

- ուսումնական հաստատության ՆՋՊ ուսուցչի որակավորման անհամապատասխանություն:

**N 06 Կառավարման խորհուրդ** Կիրառվել է 3՝ ***Խնձորուտի, Արենիի և Մալիշկայի հ.1*** միջնակարգ դպրոցներում: Խախտումներ արձանագրվել են բոլոր **3 (100%)** դպրոցներում:

**N 07 Խորհրդակցական մարմիններ** Կիրառվել է 3՝ ***Խնձորուտի, Արենիի և Մալիշկայի հ.1*** միջնակարգ դպրոցներում, խախտում արձանագրվել է միայն **1 (33%)՝** ***Մալիշկայի հ. 1*** միջնակարգ դպրոցում:

**N 08 Ուսուցչի մրցույթ** Կիրառվել է **10** դպրոցներում: Ուսուցչի մրցույթի գործընթացի խախտումներ արձանագրվել են **6 (60%)** դպրոցներում ***(Կապանի հ. 13 և Լեռնաձորի հիմնական, Վարդենիսի, Կապանի հ. 10, Մեղրիի հ. 1 միջնակարգ, Երևանի երաժշտական հ.13 հատուկ դպրոցներ):***

**N 09 Ուսուցչի ատեստավորում** Կիրառվել է **10** դպրոցներում: **Ըստ այս ս**տուգաթերթի իրականացված ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

**N 10 Էքստեռն (փոխադրում, ավարտում)** Կիրառվել է **4** դպրոցներում: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ դպրոցները այդ գործառույթը չեն իրականացրել:

**N 11 Դպրոց սովորողի ընդգրկում, տեղափոխում, ազատում** Կիրառվել է **4** դպրոցներում: Խախտում արձանագրվել է միայն **2 (50%)՝** ***Ջրառատի և Սարդարապատի միջնակարգ*** դպրոցներում:

**N 12 Սովորողների, այդ թվում՝ բացակայած սովորողների, փոխադրում, ավարտում և N 13 Շրջանավարտների ավարտական փաստաթղթերի բաշխում** Կիրառվել են 4-ական դպրոցներում: Այդ գործառույթները դպրոցներն իրականացրել են սահմանված կարգով:

**N 14 Վճարովի ծառայություններ** Կիրառվել է **12** դպրոցներում: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգված դպրոցներից 11-ը վճարովի ծառայություններ չեն իրականացրել, իսկ Երևանի հ. 55 հիմնական դպրոցում լրացուցիչ կրթական ծառայությունը

իրականացվել է համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մասնագետի կողմից:

**<u>N 15 Օլիմպիադայի կազմակերպում և անցկացում</u>** Կիրառվել է **10** դպրոցներում: Օլիմպիադայի կազմակերպման և անցկացման վերաբերյալ խախտումներ արձանագրվել են **3 (30%)** դպրոցներում (Վանաձորի հ. 6 հիմնական, Ախթալայի հ.1, Վարդաբլուրի միջնակարգ դպրոցներում):

***Խախտվել են հետևյալ իրավական ակտերի պահանջները (Աղյուսակ 5).***

| ***Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ*** | ***Դպրոցի անվանումը*** |
|---|---|
| ***«Կրթության մասին» ՀՀ օրենք*** | |
| ***14-րդ հոդվածի 2-րդ մաս.*** *«Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Երևանի հ. 55 հ/դ, Ջրառատի մ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ (դպրոց)*** |
| ***«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք*** | |
| ***5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ.*** *«Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին»:* | ***Կարինի մ/դ, Ակնալճի մ/դ, Սարդարապատի մ/դ, Ջրառատի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ*** |
| ***11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ.*** *«Պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է …և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ.*** *«Պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ*** |
| ***11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ.*** *«Պետական ուսումնական հաստատության խորհուրդը վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը»:* | ***Խնձորուտի մ/դ*** |
| ***12-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ.*** *«Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության … արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Վարդաբլուրի մ/դ, Վանանդի մ/դ, Վարդենիսի մ/դ*** |
| ***13-րդ հոդվածի 1-ին մաս.*** *«Ուսումնական հաստատությունը հանրակրթական ծրագիր(եր) կարող է իրականացնել համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում…»:* | ***Ջրառատի մ/դ*** |
| ***14-րդ հոդվածի 3-րդ մաս.*** *«Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանները կազմում է օրինակելի ուսումնական պլանների հիման վրա: Օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին»:* | ***Լեռնաձորի հ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ, Երևանի պարարվեստի պետական քոլեջ (դպրոց)*** |

| | |
|---|---|
| ***16-րդ հոդվածի 7-րդ մաս.*** *«Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով» :* | ***Սարդարապատի մ/դ*** |
| ***24-րդ հոդվածի 3-րդ մաս.*** *«Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության…»:* | ***Վարդենիսի մ/դ*** |
| ***25-րդ հոդվածի 4-րդ մաս***. *«Պետական ուսումնական հաստատության կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև փասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:* | ***Կարինի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արշուտի մ/դ, Ախթալայի հ. 1 մ/դ, Շամլուղի մ/դ*** |
| ***34-րդ հոդվածի 2-րդ մաս.*** *«Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Վարդաբլուրի մ/դ, Վանանդի մ/դ, Վարդենիսի մ/դ*** |
| ***34-րդ հոդվածի 3-րդ մաս.*** *«Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Վարդաբլուրի մ/դ, Շամլուղի մ/դ, Վանանդի մ/դ, Ջրառատի մ/դ, Վարդենիսի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրեր»*** | |
| ***3-րդ գլխի 1-ին կետի 1-ին ենթակետ.*** *«Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը պատասխանատու է հաստատությունում ուսումնական ծրագրերի կատարման համար»:* | ***Մալիշկայի հ.1 մ/դ, Երևանի հ. 55 հ/դ, Արենիի մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ*** |
| ***3-րդ գլխի 1-ին կետի 4-րդ ենթակետ.*** *«Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը… 4) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ»:* | ***Վարդենիսի մ/դ*** |
| ***7-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետ.*** *«Հանրակրթական դպրոցի ուսուցիչը ապահովել է կրթական ծրագրերի կատարումը»:* | ***Երևանի հ. 55 հ/դ*** |
| ***11-րդ գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետ.*** *«Հանրակրթական ուսումնական հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն, սպայական կոչում)»:* | ***Լեռնաձորի հ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն» (Հավելված 3)*** | |
| ***24-րդ կետ.*** *«Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան»:* | ***Երևանի հ. 55 հ/դ*** |

| | |
|---|---|
| ***33-րդ կետի 2-րդ ենթակետ***. *«Դպրոցի խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն»:* | ***Խնձորուտի մ/դ*** |
| ***33-րդ կետի 7-րդ ենթակետ***. *«Դպրոցի խորհուրդը քննարկում է .. ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***33-րդ կետի 8-րդ ենթակետ***. *«Դպրոցի խորհուրդը քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ*** |
| ***33-րդ կետի 9-րդ ենթակետ***. *«Դպրոցի խորհուրդը վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը»:* | ***Խնձորուտի մ/դ*** |
| ***41-րդ կետ***. *«Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ*** |
| ***48-րդ կետի 1-ին ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները ...»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Վարդաբլուրի մ/դ, Վանանդի մ/դ, Ջրառատի մ/դ, Վարդենիսի մ/դ*** |
| ***48-րդ կետի 3-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը»:* | ***Վարդաբլուրի մ/դ, Վանանդի մ/դ*** |
| ***48-րդ կետի 5-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է ... տնօրենի տեղակալների ու մանկավարժների հաշվետվությունները»:* | ***Ջրառատի մ/դ, Վարդենիսի մ/դ*** |
| ***48-րդ կետի 7-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը»:* | ***Խնձորուտի մ/դ, Վարդենիսի մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Ստեփանավանի ա/դ*** |
| ***48-րդ կետի 8-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ ...իրականացնում է ...* ***մանկավարժական և այլ կադրերի... ընտրությունը ...****»* | ***Կարինի մ/դ, Խնձորուտի մ/դ, Ակնալճի մ/դ, Արենիի մ/դ, Արջուտի մ/դ, Ախթալայի հ. 1 մ/դ, Ալավերդու հ. 9 մ/դ, Շամլուղի մ/դ, Երևանի հ.55 հ/դ, Սարդարապատի մ/դ, Վանանդի մ/դ, Ջրառատի մ/դ, Վարդենիսի մ/դ, Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Լեռնաձորի հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Գյումրու հ. 5 հ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ*** |
| ***48-րդ կետի 12-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենն ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար»:* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ, Երևանի հ.55 հ/դ, Վանանդի մ/դ, Ջրառատի մ/դ, Մեծավանի հ. 2 մ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ, Լեռնաձորի հ/դ, Ստեփանավանի ա/դ*** |

| | |
|---|---|
| ***48-րդ կետի 18-րդ ենթակետ.*** *«Դպրոցի տնօրենը սահմանված կարգով ձևավորում է դպրոցի սովորողների համակազմը»:* | ***Կարինի մ/դ, Ակնալճի մ/դ, Երևանի հ.55 հ/դ, Սարդարապատի մ/դ, Ջրառատի մ/դ, Վանաձորի հ. 6 հ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ*** |
| ***51-րդ կետի 2-րդ ենթակետ.*** *«Տնօրենը կազմակերպել է բյուջեի նախագծի քննարկումներ, այդ թվում՝ հանրային»* | ***Ջրառատի մ/դ*** |
| ***93-րդ կետի 10-րդ ենթակետ.*** *«Կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին»:* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***95-րդ կետ.*** *«Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ»:* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***105-րդ կետ.*** *«Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական և դասարանական ծնողական ժողովների նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում եմ դպրոցի կայքէջում»:* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1496-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգը հաստատելու մասին» հավելված*** | |
| ***10-րդ կետ.*** *«Լրացուցիչ կրթական ծառայություններ իրականացնող մասնագետի համապատասխան մասնագիտական որակավորումը պարտադիր է»:* | ***Երևանի հ.55 հ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ հաստատված «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների»*** | |
| ***3-րդ գլուխ.*** *«Սովորողի ուսումնական առաջադիմության գնահատումը» :* | ***Երևանի հ.55 հ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 4-ի № 633 որոշմամբ հաստատված «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգ»*** | |
| ***6-րդ կետի «ը» ենթակետ.*** *«Քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման աշխատանքները կազմակերպում, ղեկավարում և մշակված պլանը համաձայնեցնելուց հետո հաստատում է կազմակերպության ղեկավարը»:* | ***Ջրառատի մ/դ, Վարդենիսի մ/դ*** |
| ***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի N 494-Ա և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի N 498-Ա համատեղ հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույց»*** | |
| ***Վարդենիսի մ/դ*** | |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի № 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգ»*** | |
| ***3-րդ կետ.*** *«Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող մինչև մեկ դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին»:* | ***Վարդենիսի մ/դ*** |

| | |
|---|---|
| ***5-րդ կետ.*** *«Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ մինչև հաղթող ճանաչվելը»:* | ***Կապանի հ. 10 մ/դ*** |
| ***6-րդ կետ.*** *«Թափուր տեղ առաջանալու օրվանից մինչև մրցույթ կայանալու, թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից) որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք»:* | ***Կապանի հ. 10 մ/դ, Կապանի հ. 13 հ/դ, Լեռնաձորի հ/դ, Մեղրիի հ. 1 մ/դ*** |
| ***9-րդ կետի 1-ին ենթակետ.*** *«Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝ 1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում)»:* | ***Վարդենիսի մ/դ*** |
| ***21-րդ կետ.*** *«Հանձնաժողովը կազմված է 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, ուսուցիչ, մեկ ուսուցիչ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ»:* | ***Երևանի երաժշտական հ. 13 հատուկ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգ»*** | |
| ***10-րդ կետ.*** *«Սույն կարգի 15-րդ կետով սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների փոխդության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա»:* | ***Ջրառատի մ/դ*** |
| ***11-րդ կետ.*** *«Այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն առանց կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի՝ վերադարձած սովորողի դասարանը որոշվում է սույն կարգի 19-րդ և 20-րդ կետերի պահանջներին համապատասխան» :* | ***Սարդարապատի մ/դ*** |
| ***19-րդ կետի 3-րդ ենթակետ***. *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝ 3) 13-ից 15 տարեկան, դպրոց չհաճախած կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորողն ընդունվում է իր տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր)» :* | ***Սարդարապատի մ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի մայիսի 17-ի N 571-Ն հրամանով հաստատված ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն*** | |

| | |
|---|---|
| ***3-րդ և 6-րդ գլուխներ՝*** *«Նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հրավիրվել է հաստատության տնօրենի կողմից՝ սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում», «Աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հանրակրթական դպրոցի սեպտեմբերյան ժողովում ձևավորել է խորհրդակցական մարմին՝ աշակերտական խորհուրդ՝ կանոնադրական պահանջներին համապատասխան»:* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** |
| ***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի N 25-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»*** | |
| ***20-րդ կետի 3-րդ ենթակետ.*** *«Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է … «Կյանքի հմտություններ», «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում», «Ձեռնարկատիրական կրթություն» … (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը»:* | ***Խնձորուտի մ/դ*** |
| ***ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»*** | |
| ***27-րդ կետի 3-րդ ենթակետ.*** *«Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է … «Ձեռնարկատիրական կրթություն» (10-11-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը»:* | ***Խնձորուտի մ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրաման «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»*** | |
| ***20-րդ կետ.*** *«Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ ըստ հաստատված ժամանակացույցի, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ»:* | ***Խնձորուտի մ/դ, Մալիշկայի հ. 1 մ/դ, Արենիի մ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 05-ի N 280-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգ»*** | |
| ***4-րդ գլխի 3-րդ կետ.*** *«Օլիմպիադաները նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ստեղծվում են հանրապետական, մարզային, տարածքային,* ***<u>դպրոցական</u>*** *օլիմպիական կազմկոմիտեներ, դպրոցական կազմկոմիտեի … կազմը հաստատում է տնօրենը»:* | ***Վարդաբլուրի մ/դ, Ախթալայի հ. 1 մ/դ*** |
| ***12-րդ գլխի 1-ին կետ.*** *«Դպրոցական կազմկոմիտեն սահմանում է դպրոցական փուլի անցկացման ժամկետները՝ ըստ առարկաների»:* | ***Վարդաբլուրի մ/դ*** |
| ***12-րդ գլխի 2-րդ կետ.*** *«Դպրոցական կազմկոմիտեն նախապատրաստում է դպրոցական փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի»:* | ***Վարդաբլուրի մ/դ*** |
| ***12-րդ գլխի 3-րդ կետ.*** *«Դպրոցական կազմկոմիտեի գործառույթները. առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա դպրոցական փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու տարածքային փուլին»:* | ***Վանաձորի հ. 6 հ/դ*** |

| | |
|---|---|
| ***12-րդ գլխի 4-րդ կետ.*** *«Դպրոցական կազմկոմիտեն վերահսկում է օլիմպիադաների անցկացումը»:* | ***Վարդաբլուրի մ/դ*** |
| ***13-րդ գլխի 3-րդ կետ.*** *«Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները. դպրոցական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում փարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին»:* | ***Վանաձորի հ. 6 հ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով հաստատված հանրակրթական ծրագրերով կրթական գործունեության լիցենզիայի պայման (սովորողների համար նախատեսված սահմանային թիվ)*** | |
| *ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 14.05.2012թ. № 447–Ա/Ք հրաման* | ***Արենիի մ/դ*** |
| *ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 22.12.2010թ. N 1727-Ա/Ք հրաման* | ***Ակնալճի մ/դ*** |
| *ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 16.04.2012թ. 285-Ա/Ք հրաման* | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** |

Ըստ **Փաթեթ N 1-ի** իրականացված ստուգման արդյունքում առկա է հետևյալ պատկերը (Աղյուսակ 6).

**Աղյուսակ 6**

| ***Հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների, վարչական աշխատողների գործունեության իրավաչափություն*** | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ուսումնական հաստատության անվանում*** | ***Ստուգաթերթ N1*** | ***Ստուգաթերթ N3*** | ***Ստուգաթերթ N4*** | ***Ստուգաթերթ N6*** | ***Ստուգաթերթ N7*** | ***Ստուգաթերթ N14*** | ***Ընդհանուր ռիսկային միավոր*** |
| ***1.*** | ***Մալիշկայի թիվ 1 մ/դ*** | ***0.6*** | ***1.1*** | ***0.5*** | ***1.4*** | ***1.2*** | ***0*** | ***4.8*** |
| ***2.*** | ***Խնձորուտի մ/դ*** | ***0.2*** | ***6.4*** | ***0*** | ***1.4*** | ***0*** | ***0*** | ***8*** |
| ***3.*** | ***Արենիի մ/դ*** | ***0.4*** | ***2.8*** | ***0.3*** | ***0.7*** | ***0*** | ***0*** | ***4.2*** |
| ***Ընդամենը*** | | ***1.2*** | ***10.3*** | ***0.8*** | ***3.5*** | ***1.2*** | ***0*** | ***17*** |

Այսպիսով, աղյուսակ 6-ի տվյալների համաձայն՝

- ռիսկային միավորների գերակշռող մասը՝ 61%՝ ձևավորվել է տնօրենին ***(N03)*** ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում:

- վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների ***(N14)*** արդյունքում ձևավորված 0 միավորը պայմանավորված է եղել այն հանգամանքի հետ, որ դպրոցները վճարովի ծառայություններ չեն իրականացրել:

Ըստ **Փաթեթ N 2-ի** 10 դպրոցներում իրականացված ստուգումների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը (Աղյուսակ 7).

Աղյուսակ 7

| Դպրոցավարություն և կադրային քաղաքականություն | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ուսումնական հաստատության անվանում*** | ***Ստուգաթերթ N1*** | ***Ստուգաթերթ N2*** | ***Ստուգաթերթ N3*** | ***Ստուգաթերթ N4*** | ***Ստուգաթերթ N5*** | ***Ստուգաթերթ N8*** | ***Ստուգաթերթ N9*** | ***Ընդհանուր ռիսկային միավոր*** |
| ***1.*** | ***Կապանի թիվ 13 հ/դ*** | ***0*** | ***0*** | ***3.5*** | ***0*** | ***0*** | ***1*** | ***0*** | ***4.5*** |
| ***2.*** | ***Կապանի թիվ 10 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***3.5*** | ***0*** | ***0*** | ***1.2*** | ***0*** | ***4.7*** |
| ***3.*** | ***Լեռնաձորի հ/դ*** | ***0.3*** | ***0*** | ***5.3*** | ***0*** | ***0.3*** | ***1*** | ***0*** | ***6.9*** |
| ***4.*** | ***Մեղրիի թիվ 1 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***2*** | ***0*** | ***0*** | ***1*** | ***0*** | ***3*** |
| ***5.*** | ***Արագածոտնի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** |
| ***6.*** | ***Կարինի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***3.2*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***3.2*** |
| ***7.*** | ***Վարդենիսի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***5.9*** | ***0.2*** | ***0*** | ***2.3*** | ***0*** | ***8.4*** |
| ***8.*** | ***Երևանի թիվ 107 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** |
| ***9.*** | ***Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց*** | ***0.5*** | ***0*** | ***3.1*** | ***0*** | ***0*** | ***0.2*** | ***0*** | ***3.8*** |
| ***10.*** | ***Պարարվեստի պետական քոլեջ (դպրոց)*** | ***0.5*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0.5*** |
| ***Ընդամենը*** | | ***1.3*** | ***0*** | ***26.5*** | ***0.2*** | ***0.3*** | ***6.7*** | ***0*** | ***35*** |

Մասնավորապես՝

- ռիսկայնության ամենամեծ կշռային միավորն ըստ **<u>Փաթեթ N 2-ի</u>** ստուգաթերթերի՝ գրանցվել է ***Վարդենիսի մ/դ***-ում, ամենափոքր կշռային միավորը՝ 0՝ ***Արագածոտնի և Երևանի թիվ 107 մ/դ***-ներում:
- ուսուցչի պարտականությունների (***N02)*** կատարմանն և ուսուցչի ատեստավորման (***N 09***) գործընթացներին ուղղված ստուգումների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել:
- տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի/դասվարի պարտականությունների (***N04)*** կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել միայն ***Վարդենիսի մ/դ***-ում:
- մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին և նկարագրերին ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների (***N05***) արդյունքում խախտումներ են հայտնաբերվել միայն ***Լեռնաձորի հ/դ***-ում:
- կրթության կազմակերպմանն (***N01)*** ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են հայտնաբերվել 3 դպրոցներում (***Լեռնաձորի հ/դ, Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց, Պարարվեստի պետական քոլեջ (դպրոց)***):
- ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի (***N08)*** պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել 6 դպրոցներում:

**Փաթեթ N 3-ը** կիրառվել է 10 դպրոցներում իրականացված ստուգումների ընթացքում: Ստուգումների արդյունքներն ըստ ստուգաթերթերի և ուսումնական հաստատությունների ներկայացված են աղյուսակ 8-ում.

**Աղյուսակ 8**

| *Կրթական գործընթացի կազմակերպում* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ուսումնական հաստատության անվանում*** | ***Ստուգաթերթ N1*** | ***Ստուգաթերթ N2*** | ***Ստուգաթերթ N3*** | ***Ստուգաթերթ N4*** | ***Ստուգաթերթ N14*** | ***Ստուգաթերթ N15*** | ***Ընդհանուր ռիսկային միավոր*** |
| ***1.*** | ***Ակնալճի մ/դ*** | ***0.2*** | ***0*** | ***5.8*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***6*** |
| ***2.*** | ***Ալավերդու N 9 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***3.5*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***3.5*** |
| ***3.*** | ***Ախթալայի N 1 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***5.4*** | ***0*** | ***0*** | ***0.2*** | ***5.6*** |
| ***4.*** | ***Շամլուղի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***3.7*** | ***0.2*** | ***0*** | ***0*** | ***3.9*** |
| ***5.*** | ***Վարդաբլուրի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***0.8*** | ***0*** | ***0*** | ***0.7*** | ***1.5*** |
| ***6.*** | ***Արջուտի մ/դ*** | ***0*** | ***0*** | ***2.4*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***2.4*** |
| ***7.*** | ***Վանաձորի N 6 հ/դ*** | ***0*** | ***0*** | ***0.9*** | ***0*** | ***0*** | ***0.2*** | ***1.1*** |
| ***8.*** | ***Մեծավանի N 2 մ/դ*** | ***0*** | ***0*** | ***2.3*** | ***0.3*** | ***0*** | ***0*** | ***2.6*** |
| ***9.*** | ***Ստեփանավանի ա/դ*** | ***0*** | ***0*** | ***2.3*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***2.3*** |
| ***10.*** | ***Երևանի N 55 հ/դ*** | ***2.4*** | ***0.5*** | ***4.1*** | ***0.3*** | ***0.5*** | ***0*** | ***7.8*** |
| ***Ընդամենը*** | | ***2.6*** | ***0.5*** | ***31.2*** | ***0.8*** | ***0.5*** | ***1.1*** | ***36.7*** |

Համաձայն աղյուսակ 8-ի տվյալների՝

- կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են բոլոր 10 դպրոցներում,
- ուսուցչի պարտականությունների (***N02***), վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի պահանջների ***(N14)*** կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են հայտնաբերվել միայն ***Երևանի թիվ 55 հ/դ-ում***:
- կրթության կազմակերպմանն (***N01***) ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ հայտնաբերվել են ***Ակնալճի մ/դ-ում և Երևանի թիվ 55 հ/դ-ում***:
- տնօրենին (***N03***) ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ առկա են բոլոր 10 դպրոցներում: Ռիսկային միավորների գերակշռող մասը՝ 85%՝ ձևավորվել է հենց այս ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում:
- ռիսկայնության ամենամեծ կշռային միավորն ըստ այս փաթեթի ստուգաթերթերի՝ գրանցվել է ***Երևանի թիվ 55 հ/դ-ում***, ամենափոքր կշռային միավորը՝ ***Վանաձորի N 6 հ/դ-ում***:

**Փաթեթ N4-ը** կիրառվել է 4 դպրոցներում իրականացված ստուգումների ընթացքում: Ստուգումների արդյունքներն ըստ ստուգաթերթերի, ռիսկային միավորների և ուսումնական հաստատությունների ներկայացված են աղյուսակ 9-ում.

**Աղյուսակ 9**

| *Սովորողների շարժ՝ ընդունելության, տեղափոխման, դասարանից դասարան փոխադրման (ներառյալ՝ էքստեռն կարգով), ավարտման գործընթացների նկատմամբ վերահսկողություն* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ուսումնական հաստատության անվանում*** | ***Ստուգաթերթ N1*** | ***Ստուգաթերթ N3*** | ***Ստուգաթերթ N10*** | ***Ստուգաթերթ N11*** | ***Ստուգաթերթ N12*** | ***Ստուգաթերթ N13*** | ***Ընդհանուր ռիսկ*** |
| ***1.*** | ***Սարդարապատի մ/դ*** | ***0*** | ***5.8*** | ***0*** | ***1*** | ***0*** | ***0*** | ***6.8*** |
| ***2.*** | ***Վանանդի մ/դ*** | ***0*** | ***7.1*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***7.1*** |
| ***3.*** | ***Ջրառատի մ/դ*** | ***0.4*** | ***4.3*** | ***0*** | ***0.5*** | ***0*** | ***0*** | ***5.2*** |
| ***4.*** | ***Գյումրու թիվ 5 հ/դ*** | ***0*** | ***2.3*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***2.3*** |
| ***Ընդամենը*** | | ***0.4*** | ***19.5*** | ***0*** | ***1.5*** | ***0*** | ***0*** | ***21.4*** |

Համաձայն աղյուսակ 9-ի տվյալների՝

- խախտումներ չեն արձանագրվել հանրակրթական ուսումնական հաստատությունում դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական քննությունների կազմակերպման (***N10***), հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողների՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման (***N12***), շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման (***N13***) կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում:

- կրթության կազմակերպմանն (***N01***) ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ արձանագրվել են միայն Ջրառատի մ/դ-ում:

- հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորողի ուսումնական հաստատություն ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման կարգի (***N11***) պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում խախտումներ են արձանագրվել Սարդարապատի և Ջրառատի մ/դ-ներում:

- տնօրենին (***N03***) ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների արդյունքում՝ խախտումներ արձանագրվել են բոլոր 4 դպրոցներում: Ռիսկային միավորների գերակշռող մասը՝ 91%՝ ձևավորվել է հենց այս ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում:

Ըստ յուրաքանչյուր փաթեթի իրականացված ստուգումների արդյունքում ունենք հետևյալ պատկերը (Աղյուսակ 10)՝

**Աղյուսակ 10**

| ***Փաթեթ*** | ***Փաթեթի կշռային միավոր*** | ***Ստուգումների արդյունքում ձևավորված միջինացված ռիսկի կշռային միավոր (%)*** |
|---|---|---|
| ***Փաթեթ N1*** | ***72.8*** | ***5.7 (7.8%)*** |
| ***Փաթեթ N2*** | ***76*** | ***3.5 (4.6%)*** |
| ***Փաթեթ N3*** | ***55.8*** | ***3.7 (6.6%)*** |
| ***Փաթեթ N4*** | ***70*** | ***5.4 (7.7%)*** |

***Այսինքն, ըստ ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկի կշռային միավորների միջինացման, ստուգված դպրոցներում առավել ռիսկային է հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների, վարչական աշխատողների գործունեությունը:***

Հանրակրթության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում VI, IX և XI դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից: Գրավոր աշխատանքների միջոցով ստուգվել են սովորողների 2019-2020, 2020-2021 ուսումնական տարիների մնացորդային գիտելիքները:

Գրավոր աշխատանքին մասնակցած 1431 սովորողներից (Գծապատկեր 1) «Գերազանց» են գնահատվել 47-ը (3.3%), «Լավ»՝ 145-ը (10.1%), «Բավարար»՝ 474-ը (33.1%), «Անբավարար»՝ 765-ը (53.5%):




Գրավոր աշխատանքների միջին գնահատականը կազմել է 3.8 միավոր: Միջին գնահատականը VI դասարանում կազմել է 4.2, IX դասարանում՝ 3.4, XI դասարանում 3.6

միավոր (10 միավորային սանդղակում «Բավարար»-ի ստորին շեմը 4 միավոր է)՝ Գծապատկեր 2 :




Համեմատելով ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի արդյունքները այդ սովորողների «Մաթեմատիկա» առարկայի նախորդ տարվա գրավոր աշխատանքների արդյունքների հետ ստացել ենք հետևյալ պատկերը (Գծապատկեր 3)՝




**Գրավոր աշխատանքների արդյունքները խիստ հակասական են «Անբավարար» գնահատականների դեպքում:**

ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի դեպքում «Անբավարար» են գնահատվել գրավոր աշխատանքի մասնակիցների 53.5%-ը, իսկ նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից՝ 5.6%-ը:

ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքի տարբերակների առաջադրանքների կեսը (5 միավորը) վերաբերել են 2019-2020 ուսումնական տարվա, կեսը՝ 2020-2021 ուսումնական տարվա գիտելիքներին: 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից գրավոր աշխատանքին մասնակցած 1431 սովորողներից 777-ը (54%) ստացել են 0-2 միավոր, 509-ը (36%)՝ 3-4 միավոր, 145-ը (10%)՝ 5 միավոր: 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքներից նույն սովորողներից 0-2 միավոր ստացել են 1145-ը (80%), 3-4 միավոր՝ 261-ը (18%), 5 միավոր՝ 25 (2%)-ը:

IX և XI դասարանների գրավոր աշխատանքների տարբերակներում առաջադրանքներից 2-ը «Երկրաչափություն» առարկայից են՝ 1-ը 2019-2020 ուսումնական տարվա, 2-ը՝ 2020-2021 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող: «Երկրաչափություն» առարկայի 2019-2020 ուսումնական տարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքը կատարել են IX դասարանի 113 (20%), XI դասարանի՝ 32 (15%) սովորողներ, 2020-2021 ուստարվա գիտելիքներին վերաբերող առաջադրանքը՝ IX դասարանի 71 (12%), XI դասարանի՝ 10 (5%) սովորողներ:

Գրավոր աշխատանքի արդյունքներն ըստ դասարանների ներկայացված են ստորև բերված դիագրամում (Գծապատկեր 4)՝




Ինչպես նկատում ենք, Գծապատկեր 4-ում ներկայացված տվյալների համաձայն՝ ***բոլոր դասարաններում ավելի բարձր են 2019-2020 ուստարվա մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքները:***

2021 թվականի IV եռամսյակում 8 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում ԿՏՄ-ն իրականացրել է կրթական գործընթացի գնահատում: Կիրառված կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմը բաղկացած է հետևյալ հավելվածներից՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Մաթեմատիկա», «Ուսումնական միջավայր», «Դիմակայունություն», «Կանոններ (COVID-19)»: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը:

Կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունները՝ կրթության որակի բարելավմանը միտված առաջարկներով՝ ուղարկվել են դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին:

***Ձեռնարկված միջոցառումները՝***

Ստուգված **27** դպրոցներից **25-ում (93%),** բացառությամբ Երևանի հ. 107 և Արագածոտնի միջնակարգ դպրոցների, հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների 233 խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **25** ակտ: Խախտումներից **109-ը՝ 47%-ը,** վերաբերել են **88** մանկավարժական աշխատողների նշանակմանը: Խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրագրերով տրվել են **73** հանձնարարականներ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ դպրոցների տնօրեններին տրամադրվել են ակտերի (Երևանի հ. 107 և Արագածոտնի միջնակարգ դպրոցների տնօրեններին՝ տեղեկանքների), իսկ Երևանի քաղաքապետին, ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի, Սյունիքի, Լոռու մարզպետներին՝ ակտերի պատճենները:

***2.3. ՀՀ 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ***

***Հիմքը՝***

ԿՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ստուգումների ժամանակացույցը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

***Նպատակը՝***

Ուսումնարաններում և քոլեջներում (այսուհետ՝ նաև հաստատություն) կառավարման և կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելը, ինչպես նաև կրթական գործունեության ռիսկայնության վերլուծությունը, գնահատումը, տվյալների բազա ձևավորելը:

***Ժամկետը՝***

2021 թվականի IV եռամսյակ:

***Ստուգմամբ ընդգրկվող ժամանակահատվածը՝***

***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար*** ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան է ընդունվել 2019 թվականի մարտի 27-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ***-ի համար՝ 2019 թվականի հունիսի 10-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***ՀՀ ԿԳՄՍՆ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի*** համար՝2019 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***ՀՀ ԿԳՄՍՆ «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի*** համար՝ 2018 թվականի նոյեմբերի 29-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի*** համար՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի*** համար՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ից մինչև ստուգումը սկսելու օրը, ***«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամի*** համար՝ 2019 թվականի նոյեմբերի 25-ից մինչև ստուգումը սկսելու օրը:

## *Ստուգման արդյունքները՝*

2021 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ն ստուգումներ է իրականացրել 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ», «Կապանի արվեստի պետական քոլեջ», «Գորիսի պետական քոլեջ», «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ», «Չարենցավանի պետական քոլեջ», «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ներ, «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ):***

Ստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգված ուսումնական հաստատություններից 5-**ի** տնօրենները և 1-ի խորհուրդը սահմանված կարգով չեն իրականացրել իրենց լիազորությունները, մասնավորապես (Աղյուսակ 11).

**Աղյուսակ 11**

| ***N*** | ***Խախտման բնույթը*** | ***Հապապ ություններ ի թիվը*** | ***Հապապության անվանումը*** |
|---|---|---|---|
| ***Տնօրենի ոչ իրավաչափ գործունեություն*** | | | |
| ***1.*** | ***Տնօրենը պետական լիազոր մարմնին ներկայացրած 2019-2020 ուսումնական տարվա դիպլոմների բաշխման հաշվետվության մեջ չի ներառել սովորողների սեռի, ծննդյան թվականի, ուսումնական հաստատություն ընդունվելու և ավարտելու տարեթվերի, անձնագրի սերիայի և համարի մասին տեղեկությունները՝ սահմանված կարգին համապատասխան*** | ***4*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ», «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ»*** *(նաև՝ 2018-2019 ուստարի)****, «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ներ*** *(նաև՝ 2018-2019, 2020-2021 ուստարիներ),* ***«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ*** |
| ***2.*** | ***Կադրային նշանակումներ*** | ***2*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» (2 անձ՝ 6 առարկա), «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ներ (3 անձ՝ 4 առարկա)*** |
| ***3.*** | ***Ուսպլանի անհամապատասխանություն*** | ***1*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |

| | | | |
|---|---|---|---|
| ***4.*** | ***Մասնագիտության պետական քննության անհամապատասխանություն ուսումնական պլանին*** | ***1*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |
| ***5.*** | ***Ուսանողական վերականգնման գործընթաց*** | ***1*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |
| ***6.*** | ***Տնօրենը խորհրդի քննարկմանը չի ներկայացրել հաստատության ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը*** | ***1*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |
| ***Խորհրդի ոչ իրավաչափ գործունեություն*** | | | |
| ***7.*** | ***Խորհրդի նիստերը գումարվել են սահմանված ժամկետի խախտմամբ*** | ***1*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |

Ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների հետևյալ խախտումները (Աղյուսակ 12)՝

**Աղյուսակ 12**

| ***Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ*** | ***Հաստատության անվանումը*** |
|---|---|
| ***«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք*** | |
| ***18.1-րդ հոդվածի 21-րդ մասի 1-ին ենթակետ.*** *«Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը՝ խորհրդի քննարկմանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը…»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |
| ***18.1-րդ հոդվածի 21-րդ մասի 2-րդ ենթակետ.*** *«Տնօրենը պատասխանատու է մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների (որակավորման չափորոշիչների) և կարողությունների զարգացմանը միտված մոդուլային ուսուցման ծրագրի կատարման չափանիշներն ապահովող համապատասխան կրթության և ուսուցման գործընթացի կազմակերպման, կադրերի ընտրության համար»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |
| ***«Կրթության մասին» ՀՀ օրենք*** | |
| ***14-րդ հոդվածի 1-ին մաս՝*** *«Կրթության գործընթացը կազմակերպվում է սույն օրենքին համապատասխան և կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |
| ***ՀՀ կառավարություն 2002 թվականի հունիսի 20-ի № 1009-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների» օրինակելի կանոնադրություն Հավելված № 2,3*** | |

| | |
|---|---|
| ***38-րդ կետի 10-րդ ենթակետ.*** *«Տնօրենը՝ ուսումնական պլաններով սահմանում է քոլեջի ուսանողների ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը. …»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի թիվ 638-Ն հրամանի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգ»*** | |
| ***19-րդ կետ՝*** *«Պետական քննությունների քանակը սահմանվում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին կամ ուսումնական պլանին համապատասխան:»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 124-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ*** | |
| ***13-րդ կետ.*** *«Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի №609-Ն հրամանի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման» կարգի հավելված 2*** | |
| ***22-րդ կետ.*** *«Դիպլոմների բաշխումից հետո պետական և ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը հաշվետվություն է ներկայացնում գրությամբ՝ նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի անունով: Հաշվետվությունն իր մեջ ներառում է տեղեկատվություն ստացած, բաշխված և խոտանված ավարտական փաստաթղթերի համարների և ընդհանուր քանակի մասին՝ ըստ ուսումնական հաստատության, նշումներ պարունակելով սովորողի անվան, ազգանվան, հայրանվան, սեռի, ծննդյան թվականի, ուսումնական հաստատություն ընդունվելու (հրամանի համար) և ավարտելու (հրամանի համար) տարեթվերի, ավարտական փաստաթղթի սերիայի և համարի, անձնագրի սերիայի և համարի, մասնագիտության կոդի մասին՝ կնքված և ստորագրված տնօրենի կողմից: Հաշվետվությունները նախարարություն են ներկայացվում մինչև ընթացիկ տարվա ավարտը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով: Դրանք 5 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժնի կողմից ստուգվում են և հանձնվում նախարարության արխիվ: Թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում՝ հաշվետվություն ներկայացնողին հնարավորություն է ընձեռվում շտկելու կամ վերացնելու դրանք 5 աշխատանքային օրվա ընթացքում»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՄՍՆ «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ, «Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ*** |
| ***ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի դեկտեմբերի № 1278-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման» կարգ*** | |

| | |
|---|---|
| ***13-րդ կետի 2-րդ ենթակետ.*** *«Անձը կարող է իր ուսանողական իրավունքը վերականգնել հետևյալ պայմանների ապահովմամբ՝ ուսանողական իրավունքը վերականգնելու դեպքում պետք է պահպանվեն համապատասխան մասնագիտություններով և ուսուցման ձևով Լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար Հաստատությանը հատկացված տեղերի ընդհանուր թիվը, բացառությամբ՝ ակադեմիական արձակուրդից, մեկ տարուց ավելի տևողությամբ նպատակային արձակուրդից, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալու դեպքերի»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |
| ***22-րդ կետ.*** *«Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում Հաստատության տնօրենը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողին:»:* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** |

Համաձայն ԿՏՄ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրի՝ հաստատություններում ստուգումներն իրականացվել են նոր ձևաչափով՝ կիրառվել են առկա բոլոր ստուգաթերթերը, որոնք բաժանվել են բովանդակային 3 փաթեթների՝ ըստ սահմանված թիրախների: 2021 թվականի IV եռամսյակում իրականացված ստուգումների ընթացքում գործածվել են բոլոր **3 փաթեթները (NN 1, 2, 3):**

**Փաթեթ N1. Կրթության կառավարում *(NN 01, 02, 06, 09 ստուգաթերթեր)*՝** կիրառվել է հետևյալ **2** հաստատություններում (Աղյուսակ 13).

**Աղյուսակ 13**

| ***հհ*** | ***Հաստատության անվանումը*** | ***Ստուգաթերթերի միավորային կշիռներ*** | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ***01*** | ***02*** | ***06*** | ***09*** | ***Ընդամենը*** |
| ***1.*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** |
| ***2.*** | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*** | ***1*** | ***8*** | ***0*** | ***0*** | ***9*** |
| ***Ընդամենը*** | | ***1*** | ***8*** | ***0*** | ***0*** | ***9*** |

Համաձայն աղյուսակ 13-ի տվյալների՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են ***ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի № 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում:***

Ռիսկային միավորները տվյալ դեպքում ձևավորվել են ***N 01*** *(կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգերի պահանջներ),* ***N 02*** *(տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներ)* ստուգաթերթերով իրականացված ստուգումների արդյունքում: Հարկ է նշել, որ ռիսկային միավորների գերակշռող մասը ձևավորվել է ***N 02*** ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում:

*Ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու (**N 06) և** նախնական մասնագիտական և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում*

*դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգերի (**N 09)*** պահանջները նշված հաստատություններն իրականացրել են սահմանված կարգով:

**Փաթեթ N 2. Կրթական գործընթացի կազմակերպում *(NN 02, 03, 05, 07 ստուգաթերթեր)*՝** կիրառվել է հետևյալ **3** հաստատություններում (Աղյուսակ 14).

***Աղյուսակ 14***

| *hh* | *Հաստատության անվանումը* | *Ստուգաթերթերի միավորային կշիռներ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *02* | *03* | *05* | *07* | *Ընդամենը* |
| *1.* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** | ***0*** |
| *2.* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** | ***2*** | ***0*** | ***2*** | ***0*** | ***4*** |
| *3.* | ***«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ*** | ***0*** | ***0*** | ***1*** | ***0*** | ***1*** |
| ***Ընդամենը*** | | ***2*** | ***0*** | ***3*** | ***0*** | ***5*** |

Համաձայն աղյուսակ 14-ի տվյալների՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել ***ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում*** իրականացված ստուգման արդյունքում: Ռիսկային միավորները ձևավորվել են ***N 02*** *(տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներ)* և ***N 05*** *(պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման և շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի պահանջներ)* ստուգաթերթերի համաձայն իրականացված ստուգումների արդյունքում: Հարկ է նշել նաև, որ նշված 3 հաստատություններում ***N 07*** *(հեռավար, դրսեկությամբ, վարպետային և մեկից ավելի ուսուցման կարգերի պահանջներ)* ստուգաթերթի **0** կշիռը պայմանավորված է նրանով, որ հաստատությունները չեն իրականացրել հեռավար, դրսեկությամբ, վարպետային և մեկից ավելի ուսուցում, իսկ սովորողների ընդունելության կարգերի պահանջները (***N03)*** հաստատություններն իրականացրել են սահմանված կարգով:

**Փաթեթ N 3. Սովորողների շարժ *(NN 02, 04, 05, 08 ստուգաթերթեր)*՝** կիրառվել է հետևյալ **2** հաստատություններում (Աղյուսակ 15).

***Աղյուսակ 15***

| *hh* | *Հաստատության անվանումը* | *Ստուգաթերթերի միավորային կշիռներ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *02* | *04* | *05* | *08* | *Ընդամենը* |
| *1.* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ*** | ***0*** | ***0*** | ***1*** | ***0*** | ***1*** |
| *2.* | ***ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ*** | ***6*** | ***0*** | ***1*** | ***0.8*** | ***7.8*** |
| ***Ընդամենը*** | | ***6*** | ***0*** | ***2*** | ***0.8*** | ***8.8*** |

Համաձայն աղյուսակ 15-ի տվյալների՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են 2 հաստատություններում: Ռիսկային միավորների գերակշռող մասը ձևավորվել է ***N*02** (*տնօրենին և կրթության կազմակերպմանը ներկայացվող՝ ՀՀ*

*օրենսդրությամբ սահմանված պահանջներ*) ստուգաթերթի համաձայն իրականացված ստուգման արդյունքում: Երկու հաստատությունների կողմից էլ խախտվել են *պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման և շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի պահանջները* (***N* 05**), իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում *բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելը* (***N04***) հաստատություններն իրականացրել են սահմանված կարգով:

**Աղյուսակ 16**

| *Փաթեթ* | *Փաթեթի ռիսկի կշռային միավոր* | *Ստուգումների արդյունքում ձևավորված ռիսկի միջինացված կշռային միավոր (%)* |
|---|---|---|
| ***Փաթեթ N1*** | *74* | *4.5 (6.1%)* |
| ***Փաթեթ N2*** | *90* | *1.7 (1.9%)* |
| ***Փաթեթ N3*** | *91* | *4.4 (4.8%)* |

Այսինքն, թե՛ ստուգումների արդյունքում ձևավորված կշռային միավորների միջինացման, թե՛ ըստ միջինացված կշռային միավորների տոկոսային համամասնության՝ առավել շատ խախտումներ արձանագրվել են կրթության կառավարման (Փաթեթ N1) նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքում (Աղյուսակ 16):

Կարևոր է նշել, որ 7 հաստատություններից 5-ում տեսչական մարմնի կողմից՝ ըստ ստուգումների տարեկան ծրագրի, ստուգումներ են իրականացվել երկրորդ անգամ: Այդ հաստատություններից միայն 2-ի դեպքում է, որ վերջին ստուգման արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

***Ձեռնարկված միջոցառումներ՝***

ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են 7 հաստատություններից 5-ում, կազմվել է 5 ակտ, հանձնարարականներ են տրվել 2 հաստատությունների տնօրեններին:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ հաստատությունների տնօրեններին տրամադրվել են ակտերի մեկական օրինակները: ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրվել են ակտերի պատճենները: ՀՀ ԿԳՄՍ նախարարին առաջարկվել է քննարկել ստուգման արդյունքները և տեղյակ պահել ԿՏՄ-ին:

Ստուգումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարին՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները հետագայում բացառելու նպատակով՝ հաստատությունների տնօրենների գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու առաջարկով:

### ***3. Հետադարձ կապ***

***3.1. ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում ԿՏՄ ղեկավարի կարգադրագրերով տրված հանձնարարականների և հասցեագրություններից 2021 թվականի IV եռամսյակում ստացված կատարողականների համադրման արդյունքներ***

ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում տրված հանձնարարականների կատարման ժամկետները 2021 թվականի IV եռամսյակում լրացել են ՀՀ 18 ուսումնական հաստատությունների (10 մանկապարտեզներ, 8 դպրոցներ) դեպքում: Ստացված կատարողականների վերաբերյալ պատկերն այսպիսին է.

***Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում*** տրված հանձնարարականների կատարման ժամկետը IV եռամսյակում լրացել է ՀՀ Տավուշի, Սյունիքի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզերի 10 մանկապարտեզների դեպքում: ՀՀ Շիրակի մարզի Հառիճի, Լանջիկի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի հ. 6, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի հ.1 մանկապարտեզների տնօրենների կողմից հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություններ չեն ներկայացվել: 6 մանկապարտեզների տնօրեններից ստացված կատարողականների վերաբերյալ գրությունների թվային պատկերը ներկայացված է աղյուսակ 17-ում.

Աղյուսակ 17

***Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքներ ըստ մանկապարտեզների***

| Մանկապարտեզներ | Կադրեր | | | Հասփիք | | | | Գերբեռնված խմբեր | | Այլ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հ* | Կ* | Չ/Կ* | Հ* | Կ* | Չ/Կ* | Մ/Կ* | Հ* | Կ* | Հ* | Կ* | Չ/Կ* | Մ/Կ* |
| Նոյակերտի մանկապարտեզ | 2 | 2 | | 3 | 3 | | | | | 2 | 1 | | 1 |
| Արճիսի մանկապարտեզ | 2 | 2 | | 2 | | 2 | | | | 3 | 2 | 1 | |
| Ձորաղբյուրի մանկապարտեզ | | | | 3 | 2 | 1 | | | | 2 | | 2 | |
| Երանոսի մանկապարտեզ | 3 | | 3 | 1 | 1 | | | | | 6 | 5 | | 1 |
| Ստեփանավանի հ. 5 մանկապարտեզ | 2 | | 2 | 1 | | | 1 | | | | | | |
| «Լուսնթագ» մանկապարտեզ | | | | 3 | | 3 | | 1 | 1 | 3 | 2 | | 1 |
| Ընդամենը | 9 | 4 | 5 | 13 | 6 | 6 | 1 | 1 | 1 | 16 | 10 | 3 | 3 |

**Հ՝ հանձնարարականների թիվ, Կ՝ կատարված հանձնարարականների թիվ, Չ/Կ՝ չկատարված հանձնարարականների թիվ, Մ/Կ՝ մասամբ կատարված հանձնարարականների թիվ:*

Ինչպես ներկայացված է աղյուսակ 17-ում՝ 6 մանկապարտեզներին տրված 39 հանձնարարականներից կատարվել է 21-ը՝ 54%, մասամբ՝ 4-ը (որից 1-ի դեպքում՝ հաստիքային

միավորների վերաբերյալ գրություն է ներկայացվել համայնքի ղեկավարին), չեն կատարվել 14-ը (36%): Չկատարված հանձնարարականներից 6-ը՝ 43%՝ պակաս կամ չհատկացված հաստիքային միավորներին, իսկ 5-ը՝ 36%՝ կադրային նշանակումներին:

***Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում*** ԿՏՄ ղեկավարի կողմից 2021 թվականի IV եռամսյակը սահմանվել է որպես ստուգված դպրոցների տնօրեններին տրված հանձնարարականների կատարողականների ներկայացման ժամկետ 8 դպրոցների համար: Ստացված կատարողականների և տրված հանձնարարականների համադրման քանակական պատկերն արտահայտված է աղյուսակ 18-ում.

**Աղյուսակ 18**

| ***Հանձնարարականների և կատարողականների համադրման արդյունքներ ըստ դպրոցների*** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ***N*** | ***Դպրոցի անվանումը*** | ***Տնօրենին տրված կարգադրագիր*** | | | ***Տնօրենից ստացված կատարողական*** | | |
| | | ***Կադրեր*** | ***Ուսպլան*** | ***Այլ*** | ***Կադրեր*** | ***Ուսպլան*** | ***Այլ*** |
| ***1.*** | ***Խնձորուտի մ/դ*** | ***1*** | ***1*** | ***1*** | ***1**** | ***1*** | ***1*** |
| ***2.*** | ***Ակնալճի մ/դ*** | ***2*** | | ***1*** | ***2*** | | ***1*** |
| ***3.*** | ***Արենիի մ/դ*** | ***1*** | ***1*** | ***2*** | ***1***** | ***1*** | ***2**** |
| ***4.*** | ***Արջուտի մ/դ*** | ***1*** | | ***1*** | ***1**** | | ***1*** |
| ***5.*** | ***Շամլուղի մ/դ*** | ***2*** | | ***1*** | ***2**** | | ***1*** |
| ***6.*** | ***Կարինի մ/դ*** | | | ***1*** | | | ***1*** |
| ***7.*** | ***Կապանի հ. 10 մ/դ*** | ***1*** | | ***1*** | ***1*** | | ***1*** |
| ***8.*** | ***Մալիշկայի հ. 1 մ/դ*** | | ***1*** | ***2*** | ***3****** | | |
| ***Ընդամենը*** | | ***8*** | ***3*** | ***10*** | ***3+4*+1**** | ***2*** | ***6+2**** |
| | | ***21*** | | | ***11+6*+1**+3****** | | |

****Կատարվել է մասամբ, **չի կատարվել,***չի ներկայացվել***

Ինչպես ներկայացված է աղյուսակ 18-ում՝ 8 դպրոցներին տրված 21 հանձնարարականներից կատարվել են 11-ը, ընթացքի մեջ են՝ 6-ը: Մանկավարժական աշխատողների նշանակման 10 հանձնարարականներից կատարվել են 3-ը, ընթացքի մեջ են 4-ը, չի կատարվել 1-ը:

***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում*** տրված հանձնարարականների կատարման ժամկետը IV եռամսյակում չի լրացել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից ոչ մեկի դեպքում:

### *4. Ստուգայցեր Երևան քաղաքում գործող հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում*

***Հիմքը՝***

ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 11-Ա հրամանը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և ԿՏՄ ղեկավարների համատեղ հրամանները:

***Ժամկետը՝***

2021 թվականի IV եռամսյակ:

***Ստուգայցերի արդյունքները՝***

2021 թվականի IV եռամսյակում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և ԿՏՄ աշխատակիցների կողմից համատեղ **19** և **17** ստուգայցեր են իրականացվել համապատասխանաբար Երևան քաղաքի 19 դպրոցներ և **16** մանկապարտեզներ: 2 հաստատություններում ***(Երևանի հ. 19, 90 հիմնական դպրոցներ***) արձանագրված խախտումները շտկելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

### *5. Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում (վարչական վարույթներ)*

***Նպատակը՝***

ԿՏՄ հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգի պահանջների ապահովում:

***Ժամկետը՝***

2021 թվականի IV եռամսյակ:

***Տեղեկատվություն ստացված դիմումների, բողոքների վերաբերյալ***

2021թ. IV եռամսյակում ԿՏՄ-ում ՀՀ ԿԳՄՍ նախարարից և Երևանի քաղաքապետից ստացված գրությունների հիման վրա ստուգումներ են իրականացվել Դիլիջանի պետական քոլեջում և Երևան քաղաքի 13 դպրոցներում:

Դիլիջանի պետական քոլեջում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ակտ: Խախտումները հիմնականում վերաբերել են կառավարման խորհրդի գործունեությանը, սովորողների ընդունելության, պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման, ուսանողական իրավունքի վերականգնման, շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման,

հաշվառման, պահպանման, մեկ ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն՝ տեղափոխման գործընթացներին, կադրերի նշանակումներին:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ քոլեջի տնօրենին տրամադրվել է ակտի օրինակը, իսկ ՀՀ ԿԳՄՍ նախարարին՝ պատճենը:

Ստուգված **13** դպրոցներից **12-ում (92%),** բացառությամբ Երևանի հ. 37 հիմնական դպրոցի, հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է **12** ակտ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ դպրոցների տնօրեններին տրամադրվել են ակտերի (Երևանի հ. 37 հիմնական դպրոցի տնօրենին՝ տեղեկանքի), իսկ Երևանի քաղաքապետին՝ պատճենները:

Ստուգման ընթացքում պարզվել և քաղաքապետին տեղեկացվել է, որ բոլոր **13** դպրոցների **(100%)** կանոնադրություններում չեն ներառվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կատարված փոփոխությունները:

**Ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ 3 բնույթի խախտումները.**

- տնօրենի գործունեություն՝ **13** դպրոցներից **12-ում (92%),**
- մանկավարժական խորհրդի գործունեություն՝ **3** դպրոցներում **(23%),**
- մեթոդական միավորումների գործունեություն՝ **4** դպրոցներում **(31%):**

Հարկ է նշել, որ Երևանի հ. 122 և հ. 163 հիմնական դպրոցներում արձանագրվել են **բոլոր 3 բնույթի** խախտումները:

**Առավել հաճախ կրկնվել են ներքոնշյալ 5 խախտումները.**

- մանկավարժական աշխատողների նշանակում՝ **13** դպրոցներից **7-ում (54%),**
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների քննարկում մեթոդական միավորումների կողմից՝ **4** դպրոցներում **(31%),**
- դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվության ներկայացում խորհրդի քննարկմանը՝ **3** դպրոցներում **(23%),**
- դպրոցի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմի ներկայացում խորհրդի հավանությանը՝ **3** դպրոցներում **(23%),**
- ներքին գնահատման հաշվետվության ներկայացում կառավարման և խորհրդակցական մարմիններին, ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքի ներկայացում խորհրդի քննարկմանը՝ **3** դպրոցներում **(23%):**

Համադրման արդյունքում պարզվել է, որ Երևանի հ. 122 հիմնական դպրոցում արձանագրվել են վերոնշյալ 5 խախտումներից 4-ը (բացառությամբ մանկավարժական աշխատողների նշանակման):

***Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներն ըստ դպրոցների ներկայացված են Աղյուսակ 19-ում.***

| *Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ* | *Դպրոցի անվանումը* |
|---|---|
| ***«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք*** | |
| ***12-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ.*** *«Պետական ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ... արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք»:* | ***Երևանի հ. 35 հ/դ, Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***25-րդ հոդվածի 4-րդ մաս***. *«Պետական ուսումնական հաստատության կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական ուսումնական հաստատության վարչական աշխատողը համատեղության կարգով կարող է ունենալ շաբաթական մինչև տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն»:* | ***Երևանի հ. 35 հ/դ*** |
| ***34-րդ հոդվածի 2-րդ մաս.*** *«Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները»:* | ***Երևանի հ. 122 հ/դ*** |
| ***34-րդ հոդվածի 3-րդ մաս.*** *«Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը»:* | ***Երևանի հ. 35 հ/դ,<br>Երևանի հ. 122 հ/դ,<br>Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն» (Հավելված 3)*** | |
| ***26-րդ կետ.*** *«Դպրոցական տարիքի երեխաներին դպրոցը հանրակրթության մեջ ընդգրկում, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների, առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ հաճախել չկարողացող սովորողների կրթության կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները, արձակուրդների ժամկետները և տևողությունը, պետական ավարտական քննությունների ժամկետները և անցկացման կարգը,* ***սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման****, խրախուսման, սովորողի փոխադրման և ավարտման, սովորողին այլ դպրոց տեղափոխելու և ազատելու, սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթությունը* ***կազմակերպում է նախարարության սահմանած կարգերով****»:* | ***Երևանի հ. 176 հ/դ*** |

| | |
|---|---|
| ***48-րդ կետի 1-ին ենթակետ.*** *«Դպրոցի տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները …»* | ***Երևանի հ. 35 հ/դ, Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 160 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ, Երևանի հ. 197 հ/դ*** |
| ***48-րդ կետի 3-րդ ենթակետ.*** *«Դպրոցի տնօրենը խորհրդի հավանությանն է ներկայացնում դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմը»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, , Երևանի հ. 144 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***48-րդ կետի 5-րդ ենթակետ.*** *«Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է … տնօրենի տեղակալների ու մանկավարժների հաշվետվությունները»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***48-րդ կետի 7-րդ ենթակետ.*** *«Դպրոցի տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 144 հ/դ*** |
| ***48-րդ կետի 8-րդ ենթակետ***. *«Դպրոցի տնօրենը՝ համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ …իրականացնում է …* ***մանկավարժական և այլ կադրերի… ընտրությունը …»*** | ***Երևանի հ. 35 հ/դ, Երևանի հ. 59 հ/դ, Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 130 հ/դ, Երևանի հ. 140 հ/դ, Երևանի հ. 176 հ/դ, Երևանի հ. 181 հ/դ, Երևանի հ. 194 հ/դ*** |
| ***51-րդ կետի 2-րդ ենթակետ***. *«Տնօրենը կազմակերպել է բյուջեի նախագծի քննարկումներ, այդ թվում՝ հանրային»* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***51-րդ կետի 3-րդ ենթակետ***. *«Տնօրենը բյուջեի նախագիծը ներկայացվում է խորհրդի հավանությանը»*: | ***Երևանի հ. 122 հ/դ*** |
| ***76-րդ կետ.*** *«Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***77-րդ կետ.*** «*Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները*»: | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***79-րդ կետի 2-րդ ենթակետ.*** *«Սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***79-րդ կետի 3-րդ ենթակետ.*** «*Մանկավարժական խորհուրդը քննարկում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը*»: | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***79-րդ կետի 6-րդ ենթակետ.*** « *Դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական,* | ***Երևանի հ. 163 հ/դ*** |

| | |
|---|---|
| *սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը»:* | |
| ***80-րդ կետի 11-րդ ենթակետ.*** *«Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում է տնօրենին՝ հաստատման»:* | ***Երևանի հ. 197 հ/դ*** |
| ***83-րդ կետ***. *«Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր»:* | ***Երևանի հ. 197 հ/դ*** |
| ***89-րդ կետ.*** *«Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք»:* | ***Երևանի հ. 122 հ/դ*** |
| ***92-րդ կետ.*** *«Դասավարների համար ստեղծվում է փարրական կրթության մեթոդական միավորում»:* | ***Երևանի հ. 163 հ/դ*** |
| ***93-րդ կետի 2-րդ ենթակետ.*** *«Առարկայական կամ փարրական կրթության մեթոդական միավորումը քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը»:* | ***Երևանի հ. 122 հ/դ, Երևանի հ. 160 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ, Երևանի  հ.176 հ/դ*** |
| ***93-րդ կետի 10-րդ ենթակետ***. *«Կապարում  է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին»:* | ***Երևանի հ. 160 հ/դ, Երևանի հ.176 հ/դ*** |
| ***ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով հաստատված հանրակրթական ծրագրերով կրթական գործունեության լիցենզիայի պայման (սովորողների համար նախատեսված սահմանային թիվ)*** | |
| *ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.02.2020թ. N 197-Ա/2 և 28.10.2020թ. N 1504-Ա/2 հրամաններ* | ***Երևանի հ. 130 հ/դ*** |

2021թ. IV եռամսյակում  ԿՏՄ-ում ստացվել են **13** դիմում-բողոքներ **12** ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Ստացված դիմում-բողոքներից 4-ը վերաբերել են միջին մասնագիտական ուսումնական հաստատության, **9**-ը՝ դպրոցների գործունեությանը:

Ըստ դիմում-բողոքներում բարձրացված հարցերի՝ **3** ուսումնական հաստատություններում իրականացվել է վարչական վարույթ, **3**-ի դեպքում բարձրացված հարցերին տրվել է մասամբ պարզաբանում, 2-ի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները մասամբ վերահասցեագրվել են, 4-ի դեպքում՝ վարչական վարույթը կարճվել է, 1-ի դեպքում՝ վարչական վարույթը մասամբ է կարճվել և 2 դիմում-բողոքներ գտնվում են ընթացքի մեջ:

Առավել շատ բարձրացված հարցերը վերաբերել են տնօրենի (ռեկտորի) կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին: Այս հարցին անդրադարձ է արվել դիմում-բողոքներից 6-ում (46%):

## ***6. Կանխարգելիչ, աջակցման և խորհրդատվական միջոցառումներ***

***Հիմքը՝***

ԿՏՄ 2021 թվականի տարեկան գործունեության ծրագիրը, ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամանները:

***Նպատակը՝***

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների կատարում:

***Ձեռնարկված միջոցառումներ***

2021 թվականի IV եռամսյակում հանրակրթության, նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունների աշխատակիցների կողմից իրականացվել է 6 կանխարգելիչ միջոցառումներ: Մասնավորապես.

***<u>Հանրակրթության ոլորտում</u>***՝ սովորողների և ծնողների իրավական, մասնագիտական, մեթոդական աջակցության ապահովման, իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման նպատակով՝ **5** (առկա) իրազեկման միջոցառում է իրականացվել ՀՀ **5** հանրակրթական ուսումնական հաստատությունների ***(15.11.2021թ.-16.11.2021թ. (5) ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հh. 5, 10, 11, 13, 17 ավագ դպրոցներ)*** սովորողների և ծնողների մասնակցությամբ:

***<u>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում (ՆՄՄԿ)</u>***՝ ***1*** իրազեկում-հանդիպում (հեռավար)՝ ***9*** նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ***(06.10.2021թ. (1)՝ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ», «Կապանի արվեստի պետական քոլեջ», «Սիսիանի պետական քոլեջ», «Գորիսի պետական քոլեջ», «Մեղրու պետական քոլեջ», «Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ», «Կապանի պետական բժշկական քոլեջ», «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան», «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ներ)*** ուսանողական խորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ իրավագիտակցության բարձրացման և ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով:

Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության կողմից իրականացվել է 1 իրազեկման միջոցառում՝ 13 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ***(«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ», «Կապանի արվեստի պետական քոլեջ», «Սիսիանի պետական քոլեջ», «Գորիսի պետական քոլեջ», «Մեղրու պետական քոլեջ», «Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ», «Կապանի պետական բժշկական քոլեջ», «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան», «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ներ)*** տնօրենների մասնակցությամբ: Միջոցառման ընթացքում անդրադարձ է արվել 2020, 2021 թվականներին նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված առավել հաճախ կրկնվող խախտումների բնույթներին (խնդիրներին), ներկայացվել է ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, ռիսկայնությունը որոշող չափորոշիչների ընդհանուր նկարագիրը:

Իրազեկման գործընթացներին մասնակցել են նաև ԿՏՄ որակի ապահովման բաժնի պետը, հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետը և իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության գլխավոր մասնագետը՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

## *7. Օրենսդրական առաջարկների մասին տեղեկատվություն*

ԿՏՄ կողմից ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացվել են օրենսդրական փոփոխությունությունների առաջարկություններ: Այսպես.

- ***ԿՏՄ կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի վերաբերյալ***

ԿՏՄ կողմից լրամշակվել և հաստատման է ներկայացվել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N1153-Ն որոշմամբ հաստատված ԿՏՄ՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը: Այն հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N1947-Ն որոշմամբ:

Կազմվել, հաստատվել և հրապարակվել է ԿՏՄ 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

- ***ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հանձնարարականի համաձայն՝***

➢ ««Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ:

- ***ՀՀ վարչապետի աշխատակազմի գերատեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի առաջարկով՝***

➢ ՀՀ վարչապետի աշխատակազմի Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) – Հայաստան քարտուղարության կողմից մեկնարկած ԲԿԳ 5-րդ գործողությունների ծրագրի մասին ԲԿԳ քարտուղարության սահմանած առաջարկների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի և ԲԿԳ գլոբալ քաղաքական ուղղությունների:

- ***ՀՀ ԿԳՄՍ նախարարության առաջարկով՝***

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի N 124-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 974-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների ղեկավարման իրավունքի (հավաստագրման) համար վերապատրաստման և հավաստագրման կարգը հաստատելու մասին» հրամանի,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» և «Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» հրամանների նախագծերի,

➢ ՀՀ ԿԳ նախարարի 2017 թվականի մայիսի 31-ի №637-Ա/2 հրամանով տրված լիցենզիայի №001 ներդիրում 1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ըստ տրանսպորտի տեսակների/» և 0811.07.5 «Անասնաբուժություն» մասնագիտությունների որակավորումների և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի №73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջների անահամապատասխանության,

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի հունիսի 7-ի թիվ 40-Ա/2 հրամանով տրված՝ 0721.11.5 «Ծխախոտի աճեցման և վերամշակման տեխնոլոգիա» մասնագիտության 0721.11.01.5 «Տեխնոլոգ՝ ծխախոտի աճեցման և վերամշակման» որակավորմամբ գործունեության թույլտվության և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի №73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջով նախատեսված՝ 0721.11.01.5 «Տեխնոլոգ՝ մանկական և ֆունկցիոնալ սննդի արտադրության» որակավորման անհամապատասխանության,

➢ ՀՀ ԿԳ նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 17-ի №1305-Ա/2 հրամանով տրված լիցենզիայի №001 ներդիրում 0215.06.5 «Գործիքային կատարողական արվեստ (ըստ ճյուղերի)» մասնագիտության անվանման, ուսուցման տևողության և կրթության հիմքի և ՀՀ

կառավարության 2006թ. հունվարի 12-ի №73-Ն որոշումով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջների անհամապատասխանությունների վերաբերյալ:

## *8. Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ վերահսկողություն*

### *8.1. Հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում Արցախից տեղափոխված սովորողների ընդգրկվածության և շարժի վերաբերյալ տեղեկատվություն*

ԿՏՄ 2021 թվականի գործունեության ծրագրով նախատեսված է Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ իրականացնել վերահսկողություն՝ կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը, հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով: Այդ գործառույթի շրջանակում տեսչական մարմինը եռամսյա պարբերականությամբ, բոլոր տիպի ուսումնական հաստատությունների մասով (բացառությամբ՝ նախադպրոցական) իրականացնում է հարցում արցախի սովորողների՝ ՀՀ ուսումնական հաստատություններում ընդգրկված լինելու (շարժի) վերաբերյալ:

2021 թվականի IV եռամսյակում ԿՏՄ-ում ստացված տեղեկատվության համաձայն ՀՀ դպրոցներում, ուսումնարաններում և քոլեջներում սովորում են 3934 Արցախից տեղափոխված սովորողներ (I եռամսյակ՝ 5486, II եռամսյակ՝ 4691, III եռամսյակ՝ 3986): II կիսամյակում արցախցի սովորողների քանակը (7920 սովորող) I կիսամյակում սովորողների համեմատ (10177 սովորող) նվազել է 2257-ով՝ 22%, իսկ նախորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 52-ով (1.3%):

3934 արցախցի սովորողներից 3914-ը սովորում են դպրոցներում, 1-ը՝ ուսումնարանում, 19-ը՝ քոլեջներում: Դպրոցներում և ուսումնարան/քոլեջներում ընդգրկված արցախցի սովորողների քանակական և տոկոսային համամասնությունն համապատասխանաբար ըստ դասարանների և կուրսերի ներկայացված են ստորև բերված դիագրամներում (Գծապատկեր 5, 6):







Նույն սովորողների քանակական և տոկոսային համամասնությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի դպրոցների՝ ներկայացված է Գծապատկեր 7-ում:




Դպրոցներում ընդգրկված արցախցի սովորողների շարժի և ընդգրկվածության վերաբերյալ տվյալների համեմատական պատկերն ըստ մարզերի և եռամսյակների ներկայացված է Գծապատկեր 8-ում:




Ըստ Գծապատկեր 8-ում ներկայացված տեղեկատվության՝ ՀՀ դպրոցներում ընդգրկված նշված սովորողների թիվը IV եռամսյակում I եռամսյակի նկատմամբ նվազել է 1572-ով (29%), II եռամսյակի նկատմամբ՝ 777-ով (17%) և III եռամսյակի նկատմամբ՝ 72-ով (2%) ։

Քոլեջներում և ուսումնարաններում սովորող Արցախցի երեխաների շարժի և ընդգրկվածության վերաբերյալ տվյալների համեմատական պատկերն ըստ մարզերի ներկայացված է Գծապատկեր 9-ում:




Քոլեջներում սովորող Արցախցի երեխաների թիվը I, II եռամսյակների համապատասխան թվի համեմատ նվազել է համապատասխանաբար՝ 10-ով (30%), 4-ով (15%) և III եռամսյակի համեմատ նվազել է՝ 4-ով (17%)։ Ուսումնարաններում՝ I, II և III եռամսյակների համեմատ նվազել է համապատասխանաբար՝ 2-ով (67%), 3-ով (90%) և 1-ով (50%)։

### *8.2.* Հարցումներ արցախցի սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնական հաստատության մանկավարժական և վարչական կազմի հետ

2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում ստուգված 27 դպրոցներից 13-ում (48%) Արցախից տեղափոխված սովորողների կրթական կարիքները գնահատելու համար անցկացվել են հարցումներ։

13 դպրոցներում (*ՀՀ Արմավիրի մարզի Սարդարապատի մ/դ, Վանանդի մ/դ, Ակնալճի մ/դ, Ջրառատի մ/դ, ՀՀ Լոռու մարզի Արջուտի մ/դ, Վարդաբլուրի մ/դ, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 13 հ/դ, Կապանի հ. 10 մ/դ, ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի հ.1 մ/դ, ՀՀ Շիրակի*

*մարզի Գյումրու հ. 5 հ/դ, Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հ/դ, Երևանի երաժշտական հ. 13 հատուկ դպրոց, Երևանի հ. 107 մ/դ*) սովորել է Արցախից տեղափոխված **68** սովորող:

Դպրոցներում անցկացրած հարցման արդյունքներից երևում է, որ ընդհանուր առմամբ ծնողները գոհ են կրթության կազմակերպման գործընթացից, ինչի մասին վկայում են նրանց կողմից տրված՝ 100% դրական պատասխանները՝ դպրոցում երեխաների իրավունքների ու անվտանգության պաշտպանվածության, ուսուցիչների կողմից երեխաների գիտելիքների ու կարողությունների համապատասխան գնահատման, երեխաների կանոնավոր հաճախումների և դասերի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու վերաբերյալ: Փոխտնօրենների և դասղեկների կողմից տրված պատասխանները՝ իրենց հարցաթերթերում ներառված նույնաբովանդակ հարցապնդումներին՝ ևս ստացել են ամենաշատ դրական պատասխանները:

Ծնողների կողմից դրական պատասխանների բարձր ցուցանիշներ գրանցվել են նաև՝

- երեխաներին դասագրքերով, անհրաժեշտ գրենական պիտույքներով ապահովվածության (98%),
- դպրոցի կողմից ծնողներին պարբերաբար երեխայի առաջընթացի, կրթական խնդիրների, բացակայությունների վերաբերյալ տվյալների տրամադրման (96%),
- երեխաների կողմից դպրոցում և դպրոցից դուրս դասընկերների հետ անկաշկանդ շփման (98%),
- երեխաներին նույն դպրոցում ուսումը շարունակելու ցանկության (98%),
- ուսուցիչների կողմից երեխաներին ուսուցման առաջընթացի ապահովման աջակցման (89%), ինչպես նաև դասավանդող բոլոր ուսուցիչների հետ անկաշկանդ շփման (87%) վերաբերյալ հարցապնդումներում:

Հարցաթերթում ներառված հարցերին տրված պատասխաններից երևում է որոշակի խնդիրների առկայություն, մասնավորապես՝

- սովորողների 21%-ը դժվարանում է տնային առաջադրանքները կատարելիս, 13%-ը՝ մասամբ:
- սովորողներն ապահովված չեն համակարգիչներով (այլ ՏՏ միջոցներ), ինտերնետ կապով (ըստ անհրաժեշտության)՝ 45% և մասամբ են ապահովված՝ 19%, այսինքն սովորողների մոտ առկա են խնդիրներ ռեսուրսների հասանելիության և մատչելիության հետ կապված:
- երեխաների հետ լրացուցիչ պարապունքներ մասամբ են կազմակերպվում՝ 17%:
- դասղեկների կողմից հոգեբանամանկավարժական հարցերի վերաբերյալ խորհրդատվական հանդիպումներ մասամբ են իրականացնում՝ 17%:

***8.3. Արցախցի սովորողների գրավոր աշխատանքների արդյունքների ուսումնասիրություն***

Դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքներին մասնակցել են նաև այդ դպրոցների համակազմերում ներառված Արցախից տեղափոխված 5 սովորողներ, որոնցից «Անբավարար» են գնահատվել 4-ը:

Ըստ անհրաժեշտության, ուսուցիչների օգնությամբ լրացուցիչ ուսուցում ապահովելու նպատակով, առանձնացվել են արցախցի սովորողների գրավոր աշխատանքները: Գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» գնահատված 3 դպրոցների 4 սովորողների վերաբերյալ գրություններ են ուղարկվել ՀՀ Սյունիքի և Արմավիրի մարզպետներին՝ այդ սովորողների ուսման որակը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկով:

***ՌԳՍՊՎԳ վարչություն***